


**«ՍՈԼԱՐՍԻՆԵՐՋԻ» ՍՊԸ  
ՀՀ, ՄԱՐԶ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔ, ՀԱՄԱՅՆՔ ԳԱՎԱՌ, ԳԱՎԱՌ  
ԲՆԱԿԱՎԱՅՐ, 8.050 ՄՎտ ՀԶՈՐՈՒԹՅԱՄԲ ԱՐԵՎԱՅԻՆ  
ՖՈՏՈՎՈԼՏԱՅԻՆ ԷԼԵԿՏՐԱԿԱՅԱՆԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ՇՐՋԱԿԱ  
ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ  
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ**

Հաշվետվության հեղինակ՝ «ԳԵՈԷԿՈՆՈՄԻԿԱ» ՓԲԸ



Նախագծի հեղինակ՝ «Էկովիլ» ՍՊԸ

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ ԵՎ ՏԵՐՄԻՆՆԵՐ

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ԿԱԶՄՄԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ

### 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Նախատեսվող գործունեության անվանումը և նպատակը

Նախատեսվող գործունեության բնութագիրը

### 2. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ

Գտնվելու վայրը

Ռելիեֆ, երկրաձևաբանություն, սեյսմիկ բնութագիր

Շրջանի կլիման

Զրային ռեսուրսներ

Մթնոլորտային օդ

Հողեր

Կենսաբազմազանություն

### 3. ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

Ենթակառուցվածքներ

Պատմության, մշակութային հուշարձաններ

### 4. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐԻ ՎՐԱ ՀՆԱՐԱՎՈՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

### 5. ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԼԱՆ

### 6. ԹԱՓՈՆՆԵՐԻ ԱՌԱՋԱՑՈՒՄ

### 7. ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄՈՆԻԹՈՐԻՆԳ

### 8. ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐ

Օգտագործված գրականության ցանկ

## ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՄԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ ԵՎ ՏԵՐՄԻՆՆԵՐ

**Շրջակա միջավայր՝** բնական և մարդածին տարրերի (մթնոլորտային օդ, ջրեր, հողեր, ընդերք, լանդշաֆտ, կենդանական ու բուսական աշխարհ, ներառյալ՝ անտառ, բնության հատուկ պահպանվող տարածքներ, բնակավայրերի կանաչ տարածքներ, կառույցներ, պատմության և մշակույթի հուշարձաններ) և սոցիալական միջավայրի (մարդու առողջության և անվտանգության), գործունեների, նյութերի, երևույթների ու գործընթացների ամբողջությունը և դրանց փոխազդեցությունը միմյանց ու մարդկանց միջև

**շրջակա միջավայրի վրա ազդեցություն՝** հիմնադրության փաստաթղթի գործողության կամ նախատեսվող գործունեության իրականացման հետևանքով շրջակա միջավայրի եւ մարդու առողջության վրա հնարավոր փոփոխությունները.

**ձեռնարկող՝** սույն օրենքի համաձայն՝ փորձաքննության ենթակա հիմնադրության փաստաթուղթ մշակող, ընդունող, իրականացնող և (կամ) գործունեություն իրականացնող կամ պատվիրող պետական կառավարման կամ տեղական ինքնակառավարման մարմին, իրավաբանական կամ ֆիզիկական անձ

**ազդակիր համայնք՝** շրջակա միջավայրի վրա հիմնադրության փաստաթղթի կամ նախատեսվող գործունեության հնարավոր ազդեցության ենթակա համայնքի (համայնքների) բնակչություն՝ ֆիզիկական և (կամ) իրավաբանական անձինք

**շահագրգիռ հանրություն՝** փորձաքննության ենթակա հիմնադրության փաստաթղթի ընդունման և (կամ) նախատեսվող գործունեության իրականացման առնչությամբ հետաքրքրություն ցուցաբերող իրավաբանական և ֆիզիկական անձինք

**գործընթացի մասնակիցներ՝** պետական կառավարման ու տեղական ինքնակառավարման մարմիններ, ֆիզիկական ու իրավաբանական անձինք, ներառյալ՝ ազդակիր համայնք, շահագրգիռ հանրություն, որոնք, սույն օրենքի համաձայն, մասնակցում են գնահատումների և (կամ) փորձաքննության գործընթացին

**լանդշաֆտ՝** աշխարհագրական թաղանթի համասեռ տեղամաս, որը հարևան տարածքներից տարբերվում է երկրաբանական կառուցվածքի, ռելիեֆի, կլիմայի, հողաբուսական ծածկույթի և կենդանական աշխարհի ամբողջությամբ.

**հող՝** երկրի մակերևույթում բիոտիկ, աբիոտիկ և մարդածին գործոնների երկարատև ազդեցության արդյունքում առաջացած ինքնուրույն բնագիտապատմական հանքաօրգանական բնական մարմին՝ կազմված կոշտ հանքային և օրգանական մասնիկներից, ջրից ու օդից և ունի բույսերի աճի ու զարգացման համար համապատասխան պայմաններ ստեղծող յուրահատուկ գենետիկամորֆոլոգիական հատկանիշներ ու հատկություններ

**խախտված հողեր՝** առաջնային տնտեսական արժեքը կորցրած և շրջակա միջավայրի վրա բացասական ներգործության աղբյուր հանդիսացող հողեր.

**հողի բերրի շերտ՝** հողային ծածկույթի վերին շերտի բուսահող, որն օգտագործվում է հողերի բարելավման, կանաչապատման, ռեկուլտիվացման նպատակներով. հողի պոտենցիալ բերրի շերտ՝ հողային պրոֆիլի ստորին մասը, որն իր հատկություններով համընկնում է պոտենցիալ բերրի ապարների (բուսականության աճի համար

սահմանափակ բարենպաստ քիմիական կամ ֆիզիկական հատկություններ ունեցող լեռնային ապարներ) հատկություններին

**հողածածկույթ**՝ երկրի կամ դրա ցանկացած տարածքի մակերևույթը ծածկող հողերի ամբողջությունն է. հողի բերրի շերտի հանման նորմեր՝ հողի հանվող բերրի շերտի խորությունը (սմ), ծավալը ( $\text{մ}^3$ ), զանգվածը (տ)

**կարմիր գիրք**՝ հազվագյուտ և ոչնչացման վտանգի տակ գտնվող կենդանիների բույսերի և սնկերի լրացման, խմբագրման ենթակա ցուցակ

**կենսաբազմազանություն**՝ ցամաքային, օդային և ջրային էկոհամակարգերի բաղադրիչներ համարվող կենդանի օրգանիզմների տարատեսակություն, որը ներառում է բազմազանությունը տեսակի շրջանակներում, տեսակների միջև և էկոհամակարգերի բազմազանությունը

**բնապահպանական կառավարման պլան**՝ ընդերքօգտագործման հետևանքով բնապահպանական կորուստների նվազեցման, անվերադարձ ազդեցության կանխարգելման նպատակով պլանավորվող միջոցառումներ և դրանց իրականացման մշտադիտարկման ցուցիչներ, որոնք հստակ են և չափելի՝ որոշակի ժամանակի ընթացքում. բնության հուշարձան, բնության հատուկ պահպանվող տարածքի կարգավիճակ ունեցող գիտական, պատմամշակութային և գեղագիտական հատուկ արժեք ներկայացնող երկրաբանական, ջրաերկրաբանական, ջրագրական, բնապատմական, կենսաբանական բնական օբյեկտ

**պատմության և մշակույթի անշարժ հուշարձաններ**՝ պետական հաշվառման վերցված պատմական, գիտական, գեղարվեստական կամ մշակութային այլ արժեք ունեցող կառույցները, դրանց համակառույցներն ու համալիրները՝ իրենց գրաված կամ պատմականորեն իրենց հետ կապված տարածքով, դրանց մասը կազմող հնագիտական, գեղարվեստական, վիճակագրական, ազգագրական բնույթի տարրերն ու բեկորները, պատմամշակութային և բնապատմական արգելոցները, հիշարժան վայրերը՝ անկախ պահպանվածության աստիճանից:

**արտադրության և սպառման թափոններ** (այսուհետ՝ թափոններ)՝ արտադրության կամ սպառման ընթացքում գոյացած հումքի, նյութերի, արգասիքների, այլ արտադրանքի կամ մթերքի մնացորդներ, ինչպես նաև ապրանքներ (արտադրանք), որոնք կորցրել են իրենց սկզբնական սպառողական հատկությունները.

**թափոնների գործածություն**՝ գործողություններ, որոնք ուղղված են թափոնների գոյացման կանխարգելմանը, դրանց հավաքմանը, փոխադրմանը, պահմանը, մշակմանը,

**թափոնների օգտահանում**՝ թափոնների օգտագործում՝ որպես երկրորդային նյութական կամ էներգետիկ ռեսուրս.

**ջրերի պահպանում**՝ ջրերի աղտոտումը և հյուծումը կանխարգելող ու վերացնող միջոցառումներ

**Թույլատրելի կոնցենտրացիա՝** վնասակար նյութի այն քանակը, որի առկայությունը վնասակար ազդեցություն չի թողնում մարդու առողջության վրա և չի առաջացնում անբարենպաստ հետևանքներ:

Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությունը կազմվել է ըստ ՀՀ շրջակա միջավայրի ոլորտը կարգավորող ՀՀ օրենքների և ՀՀ կառավարության որոշումների, իրավական ակտերի պահանջներին համապատասխան:

**1. «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենք (2023թ.)** – Սույն օրենքը կարգավորում է Հայաստանի Հանրապետությունում ռազմավարական էկոլոգիական գնահատման, շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման, անդրսահմանային ազդեցության գնահատման, շրջակա միջավայրի վրա ազդեցության պետական փորձաքննության, հանրության ծանուցման, հանրային լսումների իրականացման, պետական փորձաքննական եզրակացության տրամադրման, ուժը կորցնելու, շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման, փորձաքննության և նախատեսվող գործունեության իրականացման գործընթացներում նախաձեռնողների իրավունքների ու պարտականությունների հետ կապված հարաբերությունները: Սույն օրենքի գործողությունը տարածվում է շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության, ռազմավարական էկոլոգիական գնահատման և փորձաքննության, անդրսահմանային ազդեցություն ունեցող հիմնադրությային փաստաթղթի նախագծի և նախատեսվող գործունեության շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության, շահագրգիռ հանրության ծանուցման, հանրային լսումների գործընթացների, պետական փորձաքննական եզրակացությունն ուժը կորցրած ճանաչելու և այդ գործընթացներին մասնակցող անձանց վրա:

**2. «Մթնոլորտային օդի պահպանության մասին» ՀՀ օրենք (1994թ.)** – Կարգավորում է մթնոլորտային օդի մաքրության ապահովման, մթնոլորտային օդի վրա վնասակար ներգործությունների նվազեցման ու կանխման բնագավառում հասարակական հարաբերությունները: Նպատակն է կանխել և վերացնել մթնոլորտային օդի աղտոտումը, դրա վրա մյուս վնասակար ներգործությունները, ինչպես նաև իրականացնել միջազգային

համագործակցություն մթնոլորտային օդի պահպանության բնագավառում: Համաձայն օրենքի՝ իրականացվում է մթնոլորտային օդի պահպանության համալիր միջոցառումների ծրագրի հաստատումը, սահմանվում է մթնոլորտային օդն աղտոտող նյութերի սահմանային թույլատրելի խտությունների և ֆիզիկական վնասակար ներգործությունների սահմանային թույլատրելի նորմատիվները, մթնոլորտային օդն աղտոտող նյութերի սահմանային թույլատրելի արտանետումների և ֆիզիկական վնասակար ներգործությունների սահմանային թույլատրելի մակարդակների նորմատիվների մշակման ու հաստատման, արտանետումների պետական հաշվառման կարգեր և այլն:

**3. «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության եվ օգտագործման մասին» ՀՀ օրենք (1998թ.)** - Պատմության և մշակույթի անշարժ հուշարձաններն են՝ պետական հաշվառման վերցված պատմական, գիտական, գեղարվեստական կամ մշակութային այլ արժեք ունեցող կառույցները, դրանց համակառույցներն ու համալիրները՝ իրենց գրաված կամ պատմականորեն իրենց հետ կապված տարածքով, դրանց մասը կազմող հնագիտական, գեղարվեստական, վիմագրական, ազգագրական բնույթի տարրերն ու բեկորները, պատմամշակութային և բնապատմական արգելոցները, հիշարժան վայրերը՝ անկախ պահպանվածության աստիճանից:

**4. «Բուսական աշխարհի մասին» ՀՀ օրենք (1999թ.)** – Ապահովում է բուսական տեսակների (ֆլորայի) և դրանց առաջացրած համակեցությունների (բուսականության) բազմազանության, աճելավայրերի և էկոհամակարգերի հավասարակշռվածության վրա մարդու բացասական ներգործության կանխարգելումը: Իրականացնում է բուսական աշխարհի, դրա գենոֆոնդի և ցենոֆոնդի բազմազանության, աճելավայրերի պահպանության քանակական և որակական, բուսական աշխարհի շարունակական օգտագործման և վերարտադրության գիտականորեն հիմնավորված ապահովումը, բուսական աշխարհի օգտագործման հարաբերությունների կարգավորումը, բուսական աշխարհի պահպանության և օգտագործման բնագավառում օգտագործողների իրավունքների պաշտպանությունը և պարտականությունների կատարումը:

**5. «Կենդանական աշխարհի մասին» ՀՀ օրենք (2000թ)** – Սահմանում է ՀՀ տարածքում կենդանական աշխարհի վայրի տեսակների պահպանության, պաշտպանության, վերարտադրության և օգտագործման պետական քաղաքականությունը: Նախատեսում է գենոֆոնդի և տեսակային բազմազանության պահպանության, պաշտպանության, բնականոն վերարտադրության ապահովումը, կենդանիների բնակության միջավայրի ամբողջականության խախտման կանխումը, կենդանական տեսակների և դրանց պոպուլյացիաների ու համակեցությունների ամբողջականության, կենդանիների միգրացիայի ուղիների պահպանությունը, կենդանական աշխարհի օբյեկտների օգտագործման հարաբերությունների կարգավորումը, կենդանական աշխարհի պահպանության և օգտագործման բնագավառներում օգտագործողների իրավունքների պաշտպանությունն ու պարտականությունների կատարումը:

**6. «ՀՀ Ջրային օրենսգիրք» (2002թ.)** – Նպատակն է ազգային ջրային պաշարի պահպանությունը, օգտագործելի ջրային ռեսուրսների արդյունավետ կառավարման միջոցով քաղաքացիների և տնտեսության պահանջների բավարարումը, շրջակա միջավայրի էկոլոգիական կայունության ապահովումը, ինչպես նաև սույն օրենսգրքի խնդիրների լուծման համար իրավական հիմքերի ապահովումը:

**7. «Հողերի օգտագործման և պահպանման նկատմամբ վերահսկողության մասին» ՀՀ օրենք (2008թ.)** – Սահմանվում է հողերի արդյունավետ օգտագործման և պահպանման, հողային օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ վերահսկողության իրականացման խնդիրները, ձևերը, վերահսկողություն իրականացնող մարմինները, ստուգող և ստուգվող անձանց իրավունքներն ու պարտականությունները, ստուգումների իրականացման կարգերը: Սույն օրենքի գործողությունը տարածվում է ՀՀ հողային ֆոնդում առկա բոլոր հողամասերի օգտագործման և պահպանության վրա՝ անկախ դրանց նպատակային նշանակությունից, սեփականության և (կամ) օգտագործման իրավունքի սուբյեկտներից:

**8. «Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» ՀՀ օրենք (2006թ.)** - Կարգավորում է Հայաստանի Հանրապետության բնության հատուկ պահպանվող տարածքների՝ որպես բնապահպանական, տնտեսական, սոցիալական, գիտական, կրթական, պատմամշակութային, գեղագիտական, առողջապահական, ռեկրեացիոն արժեք ներկայացնող էկոհամակարգերի, բնության համալիրների ու առանձին օբյեկտների բնականոն զարգացման, վերականգնման, պահպանության, վերարտադրության և օգտագործման պետական քաղաքականության իրավական հիմունքները:

**9. «Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենք (2016թ.)**

**10. «Թափոնների մասին» ՀՀ օրենք (2004թ.)** - Սույն օրենքը կարգավորում է թափոնների հավաքման, փոխադրման, պահման, մշակման, օգտահանման, հեռացման, ծավալների կրճատման և դրանց հետ կապված այլ հարաբերությունների, ինչպես նաև մարդու առողջության և շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելման իրավական և տնտեսական հիմքերը:

#### **ՀՀ կառավարության որոշումներ, նախարարների հրամաններ**

**11. ՀՀ կառավարության 28.12.2023թ. N2343-Ն որոշումը՝ «Հանրության իրազեկման և հանրային լսումների ծանուցման բովանդակությունը, հանրային լսումների ընթացակարգը, շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության գործընթացում շահագրգիռ հանրության կարծիքների, դիտողությունների և առաջարկությունների ներկայացման, տեղական ինքնակառավարման մարմինների կողմից նախնական համաձայնության կամ անհամաձայնության տրամադրման ընթացակարգը և ժամկետները սահմանելու մասին»:**

12. ՀՀ կառավարության 29.01.2010թ. N72-Ն որոշում՝ «ՀՀ բույսերի Կարմիր գիրքը հաստատելու մասին»:
13. ՀՀ կառավարության 29.01.2010թ. N71-Ն որոշում՝ «ՀՀ կենդանիների Կարմիր գիրքը հաստատելու մասին»:
14. ՀՀ կառավարության 14.08.2008թ. N967-Ն որոշում՝ «ՀՀ բնության հուշարձանների ցանկը հաստատելու մասին»:
15. ՀՀ Կառավարության 25.01.2005թ. N91-Ն որոշում՝ «Մթնոլորտի վրա տնտեսական գործունեության հետևանքով առաջացած ազդեցության գնահատման կարգը հաստատելու մասին»:
16. ՀՀ Կառավարության 14.08.2003թ. N1110-Ն որոշում՝ «Ջրային ռեսուրսների վրա տնտեսական գործունեության հետևանքով առաջացած ազդեցության գնահատման կարգ»:
17. ՀՀ Կառավարության 27.01.2011թ. N75-Ն որոշում՝ «Կախված տեղանքի առանձնահատկություններից՝ յուրաքանչյուր ջրավազանային կառավարման տարածքի ջրի որակի ապահովման նորմերը սահմանելու մասին»:
18. ՀՀ Կառավարության 22.07.2021թ. N1211-Ն որոշում՝ «Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի հունվարի 27-ի N75-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին»:
19. ՀՀ Կառավարության 8.12.2022թ. N1909-Ն որոշում՝ «Հրազդանի ջրավազանային կառավարման տարածքի 2022-2027 թվականների կառավարման պլանը հաստատելու մասին»:
20. ՀՀ քաղաքաշինության նախարարի 17.03.2014թ. N80-Ն հրաման՝ ՀՀՇՆ 40-01.01-2014 «Շենքերի ներքին ջրամատակարարում և ջրահեռացում» շինարարական նորմերը հաստատելու և Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարի 2001 թվականի հոկտեմբերի 1-ի N82 հրամանում փոփոխություն կատարելու մասին»:

21. **ՀՀ կառավարության 30.06.2011թ. N927-Ն որոշում՝** «Ըստ Հայաստանի Հանրապետության ջրավազանային տարածքների՝ խմելու-կենցաղային, գյուղատնտեսական նպատակներով ջրի պահանջարկի, ինչպես նաև բնապահպանական թողքերի գնահատումները սահմանելու մասին»
22. **ՀՀ Կառավարության 09.08.2007թ. N978-Ն որոշում՝** «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Եղվարդի քաղաքային համայնքի (բնակավայրի) գլխավոր հատակագիծը հաստատելու մասին»
23. **ՀՀ Կառավարության 27.05.2015թ. N764-Ն որոշում՝** «Շրջակա միջավայրի վրա հնարավոր տնտեսական վնասի գնահատման և հատուցման կարգը հաստատելու մասին»
24. **ՀՀ Կառավարության 04.01.2024թ. N32-Ն որոշում՝** «Մթնոլորտային օդն աղտոտող (վնասակար) նյութերի սահմանային թույլատրելի արտանետումների նորմատիվների նախագծերի մշակման և սահմանային թույլատրելի արտանետումների նորմատիվների նախագիծ ներկայացրած իրավաբանական անձանց և ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվող ֆիզիկական անձանց արտանետման թույլտվությունների տրամադրման կամ մերժման կամ ուժը կորցրած ճանաչելու մասին կարգը հաստատելու մասին»:
25. **ՀՀ Շրջակա միջավայրի նախարարի 07.03.2007թ. N50-Ն հրաման՝** «ՀՀ Բնապահպանության նախարարի 2006 թվականի դեկտեմբերի 25-ի N430-Ն հրամանում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին»:
26. **ՀՀ Շրջակա միջավայրի նախարարի 10.12.2003թ. N464-Ն հրաման՝** «Ջրային ռեսուրսներ թափվող կեղտաջրերի թույլատրելի սահմանային արտահոսքի չափաքանակների հաշվարկի մեթոդիկան հաստատելու մասին»:
27. **ՀՀ առողջապահության նախարարի 06.03.2002թ. N138-Ն հրաման՝** «Աղմուկն աշխատատեղերում, բնակելի և հասարակական շենքերում և բնակելի կառուցապատման տարածքներում» N2-III-11.3 սանիտարական նորմերը հաստատելու մասին»:

28. ՀՀ Շրջակա միջավայրի նախարարի 25.12.2006թ. N430-Ն հրաման՝ «Ըստ վտանգավորության դասակարգված թափոնների ցանկը հաստատելու մասին»

29. ՀՀ կառավարության 18 մայիսի 2000 թվականի 1000 Վոլտ և բարձր լարման էլեկտրական ցանցերի ու մայրուղային խողովակաշարերի պահպանության կանոնները հաստատելու մասին N 249 որոշում:

30. ՀՀ կառավարության 21 ապրիլի 2023 թվականի «Էլեկտրակայանքների շահագործման անվտանգության կանոնները հաստատելու մասին» N 583-Ն որոշում:

31. ՀՀ կառավարության 13 ապրիլի 2023 թվականի «ԷԼԵԿՏՐԱԶԱՂՈՐԴՄԱՆ ԳԾԵՐԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԳՈՏԻՆԵՐԻ ԿԱՆՈՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» N 523-Ն որոշում:


32. ՀՀ կառավարության 31 հուլիսի 2014 թվականի «ՀՀ բուսական աշխարհի օբյեկտների պահպանության և բնական պայմաններում վերարտադրության նպատակով դրանց օգտագործման կարգը սահմանելու մասին» N781-Ն որոշում:

Նախատեսվող ՇՄԱԳ հաշվետվության կազմման համար հիմք են հանդիսացել «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքը, վերոնշյալ 30 իրավական ակտերը, պատվիրատուի պահանջը, Գավառի համայնքապետարանի կողմից տրամադրված նախագծման թույլտվությունը և Էկովիլ ՍՊ ընկերության կողմից կազմված նախագծային փաստաթղթերը:

## 1.ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ


### 1.1 Նախատեսվող գործունեության անվանումը, նպատակը, հիմնավորումը

«ՍՈՒԱՐՄԻՆԵՐՋԻ» ՍՊ ընկերությունը ՀՀ Գեղարքունիքի մարզի Գավառ համայնքի՝ 05-001-1134-0026 ծածկագրով 12.082 հա հողամասում նախատեսում է կառուցել 8.050 ՄՎտ հզորությամբ արևային ֆոտովոլտային էլեկտրակայան: Արևային կայանները Հայաստանում ներդնելու գաղափարը հիմնված է մի շարք կարևոր գործոնների վրա, որոնք ենթադրում են ինչպես շրջակա միջավայրի առկա վիճակի բարելավում, այնպես էլ տնտեսական ու էներգետիկ առավելություններ: Արևային էներգիայի օգտագործումը Հայաստանում մեծապես նպաստում է երկրի զարգացմանը մի քանի հիմնական ուղղություններով: Առաջին հերթին, Հայաստանը գտնվում է արևադարձային գոտու մոտ, որտեղ արևափայլի տևողությունը շատ բարենպաստ է, ինչը նշանակում է, որ երկրի տարածքում արևային էներգիայի արդյունահանման պայմանները բացառիկ են: Այսպիսով, արևային կայանների կառուցումը հնարավորություն կտա օգտագործել այս անսպառ բնական ռեսուրսը: Երկրորդ, արևային էներգիան շատ կարևոր դեր է խաղում Հայաստանի էներգետիկ անկախության ապահովման գործում: Արևային կայաններ տեղադրելը թույլ կտա նվազեցնել երկրի կախվածությունը արտասահմանյան էներգիայի աղբյուրներից՝ հատկապես բնական գազից: Այս կերպ, երկարաժամկետ հեռանկարում, Հայաստանը կարող է հասնել ինքնաբավության էներգետիկ ոլորտում և դառնալ ավելի կայուն ու անկախ արտաքին քաղաքական ճնշումներից: Շրջակա միջավայրի վրա ազդեցության տեսանկյունից, արևային էներգիան էկոլոգիապես մաքուր է: Այն զրոյական ածխածնի արտանետում ունի, ինչը կնպաստի կլիմայի փոփոխության դեմ պայքարին, ինչի վերաբերյալ Հայաստանն ունի պարտավորություններ Կոնվենցիաների շրջանակներում:



Բացի այդ, կրճատելով ածխածնի և այլ վնասակար նյութերի արտանետումները, արևային էներգիան կլիթանի կանաչ էներգիայի տարածումը և կաջակցի համաշխարհային էներգետիկ փոփոխություններին: Տնտեսական առումով, արևային կայանների ներդրումը մեծապես կլիթանի երկրի տնտեսական աճը՝ ստեղծելով նոր աշխատատեղեր ու հնարավորություն տալով տեղական արդյունաբերության զարգացում: Արևային էներգիայի արտադրությունը կարող է դառնալ նոր տեխնոլոգիաների առաջնական աղբյուր, ինչը կապահովի նաև նոր ներդրումներ և ճարտարագիտական հնարավորություններ: Այսինքն՝ արևային էներգիայի զարգացմանը զուգահեռ,

Հայաստանի տնտեսությունն կդառնա ավելի մրցունակ և ի գործու կլինի կիրառելու արդիական տեխնոլոգիաներ: Եվ վերջապես, երկարաժամկետ տեսանկյունից, արևային էներգիան, որպես դյուրին ու էկոլոգիապես մաքուր ռեսուրս, կնվազեցնի էներգիայի արտադրության ծախսերը, ինչը հնարավորություն կտա մատակարարման համակարգի դիմաց ծախսերը լրջորեն կրճատել, ինչպես նաև բնակիչներին առաջարկել ավելի մատչելի էներգիա:



Նախատեսվող գործունեության տարածքի և շրջակա միջավայրի բնութագիրը

«ՍՈԼԱՐՄԻՆԵՐՋԻ» ՍՊԸ-ի կողմից 8,050 ՄՎտ հզորությամբ արևային ֆոտովոլտային կայան հիմնելու համար նախատեսված 12.082 հա ընդհանուր մակերեսով տարածքը գտնվում է ՀՀ Գեղարքունիքի մարզի Գավառ համայնքի Գավառ քաղաքի

վարչական տարածքում (հողամասի կադաստրային կոդը 05-001-1134-0026)՝ համանուն բնակավայրից 650 մ հյուսիս-արևելք, հարևան Նորատուս գյուղի վարչական տարածքի սահմանագծին : Երկրաբանական և երկրաձևաբանական տեսանկյունից ուսումնասիրվող տարածքն իրենից ներկայացնում է Գեղամա լեռնաշղթայի արևելյան ստորոտներում՝ Գավառագետի ձախ ափի երկայնքով տարածվող մի հատված, որն ունի հիմնականում հարթ՝ ոչ բարձր բլուրների առկայությամբ կտրարտված ռելիեֆ: Նրան բնորոշ են հրաբխային ծագում ունեցող ապարների վրա նստած սևահողային ծածկույթն ու ծովի մակերևույթից միջինում 1980-1985 մ բարձրության վրա գտնվող ալպյան մարգագետինները: Նախատեսվող գործունեության տարածքն իրենից ներկայացնում է ազատ, կառուցապատումից զուրկ տարածություն, որտեղ տարածվում են տվյալ կլիմայական շրջանին բնորոշ բուսատեսակները:



## 1.2 Նախատեսվող գործունեության բնութագիրը

Նախատեսվում է կառուցել 8.050 ՄՎտ հզորությամբ ֆոտովոլային կայան հետևյալ աշխարհագրական կոորդինատներով՝ հս. լայն. 40°22'17.36"N և արլ. երկայն. 45° 8'10.81"E, ծովի մակերևույթից 1990մ բարձրության վրա: Ֆոտովոլային կայանի գեներատորային մասը նախատեսվում է կառուցել 15392 հատ բազմաբյուրեղային ֆոտովոլտային վահանակներով՝ յուրաքանչյուրը 630Վտ առավելագույն հզորությամբ, որոնք 23 հատ 350կՎտ էլքային հզորությամբ փոխակերպիչների փոփոխական հոսանքի ելուստներից մալուխներով միանում են ենթակայանի 0.8կՎ լարման գլխավոր ընդունիչ վահաններին: Ընտրվել են JAM72D42-630/LB ֆիրմային արտադրության 22.5% ՕԳԳ-ով, IP 68 տիպի, 630Վտ առավելագույն հզորությամբ բազմաբյուրեղ ֆոտովոլտային մոդուլներ, մեկ մոդուլի չափսերը՝ 2465x1134x30մմ: Փոխակերպիչները Ginlong (Solis) արտադրության, մոդելները SOLIS-S6-GU350K-M12 350կՎտ էլքային հզորության, ցանցային տեսակ: Արևային էլեկտրակայանի տեղադրման համար նախատեսվում է կառուցել ցինկով

գալվանապատված մետաղական կոնստրուկցիաներով, և բետոնե հիմքերով ամրացված հողի վրա: Փոխակերպիչները և ֆոտովոլտային վահանակները տեղադրվում են կոնստրուկցիայով հորիզոնի նկատմամբ 24° թեքվածությամբ: Նախատեսվում է կառուցել մեկ հարկանի քարե շինություն որ ծառայելու է որպես պահակակետ և պահեստ: Ֆոտովոլտային վահանակների կոնստրուկցիաները նախատեսված են մինչև 35մ/վ քամու արագության համար (տարածքում քամու առավելագույն արագությունը ըստ շինարարական կլիմայաբանություն նորմերի 24մ/վ է, (ՀՀՇՆ 22-01-2024): Արևային կայանի տարածքում նախատեսվում է կառուցել 10/2x0.8 լարմամբ 9100կՎԱ հզորությամբ ենթակայան, որը պետք է միացվի <<ԲԷՑ>> ՓԲԸ-ին պատկանող 220/35/10 կՎ լարմամբ <<կամո>> ենթակայանի 10կՎ ՓԲՄ-ի N20 բջիջին կառուցելով մոտավորապես 10կՎ լարմամբ 1,3կմ օդային և 0.3 կմ մալուխային գիծ:


Օդային գծի կառուցման համար նախատեսվող հենասյուների տեղադրումը ենթադրում է նաև հողային աշխատանքներ՝ 29,25 խմ ծաավալով: Հողային զանգվածի տեղափոխում չի նախատեսվում քանի որ այն տեղում օգտագործվելու է որպես հետլիցք՝ տոփանման եղանակով:

Շինարարության ընթացքում շինհրապարակում աշխատելու են հետևյալ մեքենաները՝ Մակնիշը-TRACTOR JSB, Crane-Shacman, Truck-Man, manipulator-Foton, Concrete mixer truck-Man:



Ինժեներական լուծումներ. Ժամանակավոր էլեկտրամատակարարում և ջրամատակարարում.

Շինարարության համար անհրաժեշտ էլեկտրամատակարարումն ապահովելու համար անհրաժեշտ է տեղադրել դիզելային գեներատոր, իսկ ջրամատակարարումն ապահովելու համար՝ տարաներով ջուր: Բուն շինարարական աշխատանքներից առաջ անհրաժեշտ է ապահովել շինարարության իրականացման տարածքների առանձնացումը և կողմնակի անձանց մուտքի սահմանափակումը անվտանգության նկատառումներից ելնելով: Անհրաժեշտ է ԱՖԷԿ-ի համար հատկացված հողատարածքի ամբողջ երկարությամբ ապահովել զգուշացնող նշաների տեղակայումը: Տարածքն ամբողջությամբ ժամանակավոր ցանկապատման փոխարեն առաջարկվում է ի սկզբանե կառուցել ԱՖԷԿ-ի հողատարածքի հիմնական ցանկապատը ըստ նախագծի, բաց թողնելով միայն հողատարածքի դարպասը: Բաց թողնված հատվածում անհրաժեշտ է իրականացնել ժամանակավոր առանձնացնող ցանկապատ:



Ստորև ներկայացվում են նախատեսվող գործունեության համար հայցվող հողատարածքի կողորդինատները ARM WGS-84 համակարգով:

|   | x           | y           |
|---|-------------|-------------|
| 1 | 8511749.915 | 4471178.792 |
| 2 | 8511750.623 | 4471175.180 |
| 3 | 8511825.946 | 4471019.061 |
| 4 | 8511802.479 | 4470927.403 |
| 5 | 8511781.289 | 4470929.619 |
| 6 | 8511602.617 | 4470776.522 |
| 7 | 8511584.201 | 4470770.178 |
| 8 | 8511491.998 | 4470656.627 |
| 9 | 8511387.263 | 4471023.124 |

Ենթակայանի և ղեկավարման շենքի կառուցում

Հողային աշխատանքների ավարտից հետո առանձին շինարարական խմբով սկսել ենթակայանի և ղեկավարման շենքի շինության կառուցումը՝ զուգահեռաբար արևային կայանի մյուս մասի շինարարական աշխատանքներին: Շինության շինարարությունը իրականացնել ՀՀ-ում գործող նորմատիվներին և պահանջներին համապատասխան, ինչպես նաև հաշվի առնելով հրդեհային անվտանգության կանոնները: Հիմքերի բետոնացման աշխատանքներն իրականացնել եղանակային վնասակար ազդեցություններն հաշվի առնող պայմանները: Կառուցման աշխատանքներից հետո անցնել ներքին հարդարման աշխատանքներին, բոլոր նյութերի ընտրությունը կատարելիս հաշվի առնել դրանց դիմացկունությունը տվյալ շինության աշխատանքային պայմաններին:

Շինհրապարակի կազմակերպման հատակագիծը ներկայացվում է հաջորդիվ: Աշխատողների սանիտարակենցաղային պայմաններն ապահովելու համար տարածքում նախատեսվում է տեղադրել՝ 2 բիոզուգարան, աշխատակազմի հանգստի համար նախատեսված սենյակ, պահակատուն, մեքենաների անիվների լվացման կետ (հողատարածքի մուտքի/ելքի մոտ), կենցաղային և շինարարական աղբի հավաքման 2 կետ (շինարարական աղբի հավաքումը և տեղափոխումը կիրականացվի գործող նորմերին համապատասխան՝ պայմանագրային հիմունքներով և համաձայնեցված Գավառի համայնքապետարանի հետ):

Մեքենաների անիվների լվացումն իրականացվելու է անխտիր բոլոր գործունեության տարածք մուտք գործող և դուրս եկող մեքենաների համար՝ մուտքի/ելքի մոտ նախագծված անիվների լվացման կետում: Անիվների լվացման արդյունքում

առաջացած հոսքաջրերը նախատեսվում է ուղղել անիվների լվացման կետին կից տեղադրվող պլաստմասե բաք՝ որտեղ տեղի է ունենում նավածքագոյացում: Ֆիլտրված ջուրը հնարավոր է օգտագործել ջրցանի համար՝ փոշեառաջացումը կանխելու նպատակով, իսկ փոքր քանակություններով առաջացող նստվածքը կհեռացվի որպես շինադր:

Բնառեսուրսներից օգտագործվելու է միայն ջուր, շինհրապարակի ջրցանի և աձնակազմի խմելու-կենցաղային կարիքների համար, ինչը կգնվի համապատասխան կազմակերպություններից: Ջրապահանջարկի հաշվարկները ներկայացվում են ստորև: Շինանձնակազմի կենցաղային և տնտեսական ջրածախսը որոշվում է հետևյալ բանաձևով՝

$$W_{\text{խ.տ.}} = (n \times N + n1 \times N1) \times T = 449,5 \text{ խմ/շին ժամ.}$$

որտեղ  $n$  – ԻՏ աշխատողների, ծառայողների թվաքանակն է՝ 70 մարդ

$N$ – ԻՏԱ ջրածախսի նորմատիվն է՝ 0.016 մ<sup>3</sup> օր/մարդ

$n1$ – սպասարկող աշխատողների թվաքանակն է՝ 10 մարդ

$N1$  – սպասարկողների ջրածախսի նորմատիվն է՝ 0.025 մ<sup>3</sup> օր/մարդ

$T$  – աշխատանքային օրերի թիվն է՝ 310 օր

Ջրցանի համար օգտագործվող ջրի ծախսը որոշվում է հետևյալ կերպ՝

$$U1 = S1 \times K1 \times T \vartheta = 600 \text{ խմ/շին ժամ.}$$

որտեղ՝  $S1$  – ջրվող տարածքի մակերեսը, 2000 քմ,


$K1$  – 1 քմ օրական ջրցանի նորմը՝ 0.0015 մ<sup>3</sup>,

$T$  – ջրցանի ժամանակահատվածը օրերով, 200

Ընդամենը ջրօգտագործումը կկազմի 1050 խմ/շին. ժամ:

Շահագործման և վարձակալության ժամկետի ավարտից հետո նախատեսվում է ապամոնտաժել բետոնային հիմքերը, հեռացնել բոլոր մետաղական կոնստրուկցիաները և տեղակայված շինությունները, իրականացնել հողամասի հողի վար՝ նպատակ ունենալով վերականգնել հողի ֆիզիկամեխանիկական հատկությունները և հանձնելու է սեփականատիրոջը: Քանի որ համաձայն **«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին»** օրենքի նախատեսվող գործունեության փակումը ևս ենթակա է շրջակա միջավայրի վրա ազդեցության և փորձաքննության՝

փակման ավելի մանրամասն ծրագիրը հնարավոր կլինի ներկայացնել նախատեսվող գործունեության շահագործման ժամկետի ավարտական շրջանում:



## 2.ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ

### **Գտնվելու վայրը, ռելիեֆ, երկրաձևաբանություն, սեյսմիկ բնութագիր**

Ուսումնասիրվող տարածքը գտնվում է Գեղամա լեռնաշղթայի արևելյան լանջին, Գավառագետի ստորին հոսանքի ավազանում: Հեռավորությունը Երևանից 98 կմ է, Սևան երկաթուղային կայարանից՝ 36 կմ: Ծովի մակարդակից 2000 մետր բարձրության վրա:

Ուսումնասիրվող տարածքի երկրաբանական կտրվածքում մասնակցում են չորրորդականի լավաները: Այս ապարները մերկանում են հյուսիսային և հյուսիս-արևելյան հատվածներում, մնացած հատվածներում լավային ապարները ծածկված են էյուվիալ-դեյուվիալ-պրոյուվիալ առաջացումներով՝ ավազակավային գրունտ:

Հիդրոերկրաբանական տեսակետից ուսումնասիրվող տարածքը՝ կախված երկրաբանական կտրվածքից, համարվում է մթնոլորտային տեղումների ինֆիլտրացիոն գոտի: Տեղամասում ըստ հորատված հորատանցքների ստորերկրյա ջրեր չեն բացահայտվել և ըստ ֆոնդային տվյալների գտնվում են են 8մ ավելի խորը հորիզոններում:

Ֆիզիկաերկրաբանական վտանգավոր երևույթները ինչպիսիք են կարստը, սողանքը, քարաթափությունը, փլուզումը և այլն՝ մեր ուսումնասիրվող տարածքում բացակայում են:

Շրջանի սեյսմիկ պայմանները Ըստ սեյսմիկ հատկության՝ ՀՀՇՆ -20.04.2020թ.-ի, տեղադնվող շրջանը գտնվում է 2-րդ սեյսմիկ գոտում, արագացման առավելագույն մեծությունը՝  $A_{max}=0,4g$  :

Տարածքի երկրաբանական կտրվածքը ուսումնասիրվել է հորատման եղանակով, բնական մերկացումների և արխիվային նյութերի հիման վրա: Ուսումնասիրվող տարածքում առանձնացվել է գրունտների մեկ շերտ: Ստորև բերվում է այդ շերտերի լիթոլոգիական նկարագրությունները և նրանց ֆիզիկա-մեխանիկական հատկությունները:

0.0-3.0մ Ավազակավեր բացից մինչև մուգ շականակագույն, պինդ թանձրությամբ, թույլ խոնավությամբ, թեթև, փոշենման մասնիկների պարունակությամբ, տեղ-տեղ խճի և մանրախճի պարունակությամբ 10-15%, մանրամիջահատիկ: Էյրովիալ-Դեյրովիալ-պրոյրովիալ առաջացումներ են: Գրունտը ըստ շահագործման դժվարության՝ համաձայն (33գ) III կարգ է:

| Հատկանիշի անվանումը                                       |        | Գրունտի անվանումը և շերտի համարը |
|-----------------------------------------------------------|--------|----------------------------------|
|                                                           |        | 1                                |
| Գրունտների անվանումները                                   |        | Ավազակավ                         |
| Ծավալային խտությունը $q/m^3$                              | $\rho$ | 1.95                             |
| Տեսակարար խտությունը $q/m^3$                              | $\rho$ | 2,76                             |
| Ներքին շփման անկյուն, աստ.                                | $\Phi$ | $19^{\circ}20'$                  |
| Բնական խոնավություն                                       | W      | 24.30                            |
| Ձևախախտման մոդուլը, ՄՊա                                   | E      | 19,6                             |
| Գրունտի հաշվարկային դիմադրությունը $kq/սմ^2$              | $R_0$  | 2,2                              |
| Ընկրկելության գործակից $տ/m^3$                            | $k_h$  | 2500                             |
| Գրունտի կարգը և մշակման պարագրաֆները                      | աղ.    | III (33 <sup>գ</sup> )           |
| Գրունտների կարգը ըստ սեյսմիկ հատկանիշերի ՀՀ ՇՆ 20.04.2020 |        | III                              |

Կլիման ուսումնասիրվող տարածքի կլիմայական պայմանները բնութագրելիս վկայակոչել ենք ՀՀ քաղաքաշինության նախարարության ՀՀՇՆ 22.01.24 «Շինարարական կլիմայաբանություն» նորմատիվային փաստաթուղթը: Ստորև աղյուսակի տեսքով բերվում է մի քանի կլիմայական տվյալներ՝ ըստ «ԳԱՎԱՌ» օդերևութաբանական կայանի դիտարկումների:

- Տարեկան միջին ջերմաստիճանը  $4.8^{\circ}\text{C}$
- Օդի բացարձակ առավելագույն ջերմաստիճանը  $36,1^{\circ}\text{C}$
- Օդի բացարձակ նվազագույն ջերմաստիճանը  $-33^{\circ}\text{C}$
- Օդի միջին տարեկան հարաբերական խոնավությունը 70%
- Օդի հարաբերական խոնավությունը ամենացուրտ ամսվա 63%
- Օդի հարաբերական խոնավությունը ամենաշոգ ամսվա 50%
- Տարեկան մթնոլորտային տեղումների քանակը հասնում է 400-500մմ:
- Քամու միջին տարեկան արագությունը 3.1մ/վ:
- Չյունածածկի տևողությունը 107օր:
- 25 տարվա ընթացքում հնարավորն են 27մ/վրկ, 50 տարվա մեջ 30մ/վ ուժգնության քամիներ:
- Բնահողի սառչելու առավելագույն խորությունը հասնում է 108սմ:

| Բնակավայրի,<br>օդերևութա-<br>բանական կայանի<br>անվանումը | Միջին ջերմաստիճանն ըստ ամիսների, °C |                     |          |                   |       |                 |                 |                 |                        |                            |              |                         | Միջի<br>ն<br>տարե<br>-կան,<br>°C | Բացա<br>րձակ<br>նվազ<br>ա<br>գույն,<br>°C | Բացա<br>րձակ<br>առա-<br>վելա-<br>գույն,<br>°C |
|----------------------------------------------------------|-------------------------------------|---------------------|----------|-------------------|-------|-----------------|-----------------|-----------------|------------------------|----------------------------|--------------|-------------------------|----------------------------------|-------------------------------------------|-----------------------------------------------|
|                                                          | Հուն<br>վար                         | Փետ<br>ր<br>վա<br>ր | Մար<br>տ | Ա<br>պ<br>րի<br>լ | Մայիս | Հու<br>-<br>նիս | Հու<br>-<br>լիս | Օգո<br>ս<br>տոս | Սե<br>պ<br>տեմ<br>-բեր | Հոկ<br>-<br>տե<br>մ<br>բեր | Նոյեմ<br>բեր | Դեկ<br>-<br>տեմ<br>-բեր |                                  |                                           |                                               |

Օդի միջին ջերմաստիճան

| 1     | 2    | 3    | 4    | 5   | 6   | 7    | 8    | 9    | 10   | 11  | 12  | 13   | 14  | 15    | 16   |
|-------|------|------|------|-----|-----|------|------|------|------|-----|-----|------|-----|-------|------|
| Գավառ | -7.3 | -6.2 | -2.0 | 4.2 | 9.1 | 12.8 | 15.9 | 15.9 | 12.2 | 6.9 | 0.7 | -4.6 | 4.8 | -33.0 | 34.1 |

Օդի հարաբերական խոնավություն

| Բնակավայր<br>ի,<br>օդերևութա- | Օդի հարաբերական<br>խոնավությունը, % |  |  |  |  |
|-------------------------------|-------------------------------------|--|--|--|--|
|                               | ըստ<br>ամիսների                     |  |  |  |  |

| բանական<br>կայանի<br>անվանումը | Հուն<br>-<br>վար | Փետ<br>ր<br>վար | Մար<br>տ | Ապ<br>-<br>րիլ | Մա<br>-<br>յիս | Հու<br>-<br>նիս | Հու<br>-<br>լիս | Օգոս<br>-<br>տոս | Սեպ<br>-<br>տեմ<br>-<br>բեր | Հոկ<br>-<br>տեմ<br>-<br>բեր | Նոյեմ<br>բեր | Դեկ<br>-<br>տեմ<br>-<br>բեր | Մի- ջին տարե<br>կան,<br>% |  |
|--------------------------------|------------------|-----------------|----------|----------------|----------------|-----------------|-----------------|------------------|-----------------------------|-----------------------------|--------------|-----------------------------|---------------------------|--|
|--------------------------------|------------------|-----------------|----------|----------------|----------------|-----------------|-----------------|------------------|-----------------------------|-----------------------------|--------------|-----------------------------|---------------------------|--|

| 1     | 2  | 3  | 4  | 5  | 6  | 7  | 8  | 9  | 10 | 11 | 12 | 13 | 14 |
|-------|----|----|----|----|----|----|----|----|----|----|----|----|----|
| Գավառ | 73 | 72 | 71 | 68 | 69 | 70 | 71 | 69 | 68 | 69 | 71 | 73 | 70 |

#### Քամի

| Բնակա<br>-<br>վայրի,<br>օդերևու<br>թաբա-<br>նական<br>կայան<br>ի<br>անվա-<br>նումը | Միջին<br>տարե-<br>կան<br>մթնո-<br>լորտա<br>- յին<br>ճնշում<br>ը,<br>(հՊա) | Ամիս-<br>ներ | Կրկնելիությունը, %<br>Միջին արագությունը, մ/վ<br>ուղղությունների |                                              |                       |                                            |                            |                                                 |                                   | Անհո<br>ղմու-<br>թյուն-<br>ների<br>կրկնե<br>-լիու-<br>թյունը<br>,<br>% | Միջի<br>ն<br>ամս<br>ա<br>կան<br>արա-<br>գու-<br>թյու-<br>նը,<br>մ/վ | Միջի<br>ն<br>տարե<br>կան<br>արա-<br>գու-<br>թյունը<br>,մ/վ | Ուժեղ<br>քամի-<br>ներով<br>(≥15մ/վ<br>)օրերի<br>քանակ<br>ը | Հաշվարկայի<br>նարագու-<br>թյունը, մ/վ,<br>որը հնարա-<br>վոր է մեկ<br>անգամ «ո»<br>տարիների<br>ընթացքում |  |  |
|-----------------------------------------------------------------------------------|---------------------------------------------------------------------------|--------------|------------------------------------------------------------------|----------------------------------------------|-----------------------|--------------------------------------------|----------------------------|-------------------------------------------------|-----------------------------------|------------------------------------------------------------------------|---------------------------------------------------------------------|------------------------------------------------------------|------------------------------------------------------------|---------------------------------------------------------------------------------------------------------|--|--|
|                                                                                   |                                                                           |              | Հյու-<br>սիսա<br>յին<br>(Հս)                                     | Հյու-<br>սիս-<br>արևե<br>լյան<br>(ՀսԱ<br>րլ) | Արևե<br>լյան<br>(Արլ) | Հա-<br>րավ-<br>արևե<br>լյան<br>(ՀվԱ<br>րլ) | Հա-<br>րավ<br>ային<br>(Հվ) | Հա-<br>րավ-<br>արևմ<br>-<br>տյան<br>(ՀվԱ<br>րմ) | Արև<br>մ<br>տյա<br>ն<br>(Արմ<br>) |                                                                        |                                                                     |                                                            |                                                            | Հյու-<br>սիս-<br>արևմ<br>տյան<br>(ՀսԱ<br>րմ)                                                            |  |  |
|                                                                                   |                                                                           |              |                                                                  |                                              |                       |                                            |                            |                                                 |                                   |                                                                        |                                                                     |                                                            |                                                            |                                                                                                         |  |  |

|       |       |           |     |     |     |     |     |     |     |     |    |     |     |    |    |    |    |
|-------|-------|-----------|-----|-----|-----|-----|-----|-----|-----|-----|----|-----|-----|----|----|----|----|
| Գավառ | 802,8 | հունվար   | 15  | 6   | 13  | 9   | 14  | 15  | 20  | 8   | 52 | 2.1 | 1.7 | 30 | 25 | 27 | 29 |
|       |       |           | 1.2 | 1.1 | 1.1 | 2.6 | 1.9 | 2.2 | 2.0 | 1.8 |    |     |     |    |    |    |    |
|       |       | ապրիլ     | 18  | 8   | 20  | 9   | 10  | 11  | 18  | 6   | 63 | 2.2 |     |    |    |    |    |
|       |       |           | 1.5 | 1.5 | 1.3 | 2.2 | 2.9 | 2.5 | 2.3 | 1.5 |    |     |     |    |    |    |    |
|       |       | հուլիս    | 35  | 15  | 20  | 7   | 5   | 4   | 6   | 8   | 56 | 1.6 |     |    |    |    |    |
|       |       |           | 1.4 | 1.2 | 1.1 | 1.3 | 1.5 | 1.0 | 1.0 | 1.2 |    |     |     |    |    |    |    |
|       |       | հոկտեմբեր | 21  | 9   | 14  | 6   | 8   | 10  | 23  | 9   | 54 | 1.7 |     |    |    |    |    |
|       |       |           |     |     |     |     |     |     |     |     |    |     |     |    |    |    |    |

### Արևափայլի տնտեսությունը

| Բնակավայրի<br>, օդերևութա-<br>բանական<br>կայանի<br>անվանումը | Տնտեսությունն ըստ ամիսների, ժամ |              |      |                 |                 |             |             |              |                |                |               |                | Տարեկան<br>գումա-<br>րային |
|--------------------------------------------------------------|---------------------------------|--------------|------|-----------------|-----------------|-------------|-------------|--------------|----------------|----------------|---------------|----------------|----------------------------|
|                                                              | Հուն-<br>վար                    | Փետր-<br>վար | Մարտ | Ապ-<br>-<br>րիլ | Մա-<br>-<br>յիս | Հու-<br>նիս | Հու-<br>լիս | Օգոս-<br>տոս | Սեպ-<br>տեմբեր | Հոկ-<br>տեմբեր | Նոյեմ-<br>բեր | Դեկ-<br>տեմբեր |                            |

|   |   |   |   |   |   |   |   |   |    |    |    |    |    |
|---|---|---|---|---|---|---|---|---|----|----|----|----|----|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 | 13 | 14 |
|---|---|---|---|---|---|---|---|---|----|----|----|----|----|

|       |     |     |     |     |     |     |     |     |     |     |     |     |      |
|-------|-----|-----|-----|-----|-----|-----|-----|-----|-----|-----|-----|-----|------|
| Գավառ | 114 | 122 | 152 | 157 | 197 | 258 | 276 | 259 | 245 | 188 | 142 | 116 | 2226 |
|-------|-----|-----|-----|-----|-----|-----|-----|-----|-----|-----|-----|-----|------|

Մթնոլորտային տեղումներ և ձնածածկույթ

| Բնակավայրի<br>,<br>օդերևութաբա-<br>նական<br>կայանի<br>անվանումը | Տեղումների քանակը <u>միջին ամսական</u> , մմ<br>օրական առավելագույն |                 |          |                |                |                 |                 |                 |                             |                             |              |                             | Ձնածածկույթ                                                                                |                                                                     |                                                                                |
|-----------------------------------------------------------------|--------------------------------------------------------------------|-----------------|----------|----------------|----------------|-----------------|-----------------|-----------------|-----------------------------|-----------------------------|--------------|-----------------------------|--------------------------------------------------------------------------------------------|---------------------------------------------------------------------|--------------------------------------------------------------------------------|
|                                                                 | ըստ<br>ամիսների                                                    |                 |          |                |                |                 |                 |                 |                             |                             |              |                             | Առավ<br>ե-<br>լագույ<br>ն<br>տաս-<br>նօրյա-<br>կային<br>բարձ-<br>րու-<br>թյունը<br>,<br>սմ | Տարվ<br>ամեջ<br>ձնա-<br>ծած-<br>կույթո<br>վ<br>օրերի<br>քա-<br>նակը | Ձյան<br>մեջ<br>ջրի<br>առա<br>-<br>վելա<br>-<br>գույն<br>քա-<br>նակը<br>,<br>մմ |
|                                                                 | Հուն<br>-<br>վար                                                   | Փետ<br>ր<br>վար | Մար<br>տ | Ապ<br>-<br>րիլ | Մա<br>-<br>յիս | Հու<br>-<br>նիս | Հու<br>-<br>լիս | Օգո<br>ս<br>տոս | Սեպ<br>-<br>տեմ<br>-<br>բեր | Հոկ<br>-<br>տեմ<br>-<br>բեր | Նոյեմ<br>բեր | Դեկ<br>-<br>տեմ<br>-<br>բեր |                                                                                            |                                                                     |                                                                                |


| 1     | 2  | 3  | 4  | 5  | 6  | 7  | 8  | 9  | 10 | 11 | 12 | 13 | 14  | 15 | 16 | 17 |
|-------|----|----|----|----|----|----|----|----|----|----|----|----|-----|----|----|----|
| Գավառ | 18 | 20 | 34 | 47 | 72 | 73 | 63 | 46 | 38 | 37 | 28 | 18 | 494 | 37 | 96 | 99 |
|       | 33 | 38 | 52 | 40 | 54 | 56 | 69 | 60 | 74 | 49 | 42 | 44 | 74  |    |    |    |


## Մթնոլորտային օդ

Գավառ քաղաքում բացակայում են մթնոլորտային օդի որակի դիտարկումները: ՀՀՇՄՆ ՀՄԿ-ն ունի ժամանակավոր առաջարկություններ «Վնասակար նյութերի ֆոնային կոնցենտրացիաների» համար հաշվարկ, ըստ որի Գավառ քաղաքում, որտեղ բնակչությունը կազմում է 28792 մարդ, ֆոնային կոնցենտրացիաներն են՝ փոշի՝ 0.095 մգ/մ<sup>3</sup>, ծծմբի երկօքսիդ (SO<sub>2</sub>)՝ 0,006 մգ/մ<sup>3</sup>, ազոտի երկօքսիդ (NO<sub>2</sub>)՝ 0.033 մգ/մ<sup>3</sup> և ածխածնի օքսիդ (CO)՝ 1,1 մգ/մ<sup>3</sup>:

## Ջրային ռեսուրսներ

Քաղաքի միջով հոսում է Գավառագետ գետը: Գետի ծախսը տատանվում է 2.04-4.71 մ<sup>3</sup>/վրկ և միջին տարեկան նշանակությամբ կազմում է 3.06 մ<sup>3</sup>/վրկ: Ամռան ամիսներին գետի վերին հոսանքում ջրերը օգտագործվում են ոռոգման նպատակներով, որի պատճառով քաղաքում նրա հունը երբեմն անջուր է: Սնումը խառն է, հալոցքային, անձրևային և գրունտային: Ստորին հոսանքում ջրերը ներծծվում են Սևանա լճի մերձափնյա նստվածքներով, որի պատճառով բացակայում է մակերևութային հոսքը: Գավառագետ գետի ջրի որակի տվյալները տարբեր դիտակետերում բերված են ստորև:





ՄԵՎԱՆԱ ԼՃԻ ԶՐՀԱՎԱՔ ԱՎԱԶԱՆԻ ԶՐԵՐԻ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ՂԵՏԱՅԱՆՑ




## Հողային ռեսուրսներ

Հողերի որակի գիահատումն իրականացվում է ՀՀ առողջապահության նախարարի 2010 թվականի հունվարի 25-ի N 01-Ն հրամանի համաձայն: Գեղարքունիքի մարզում հողային ծածակույթի աղտոտվածությունը ծանր մետաղներով դիտարկվել է միայն Վարդենիսում: 2022թ. դիտարկումների արդյունքները բերված են աղյուսակում:

| Մարզ/ Քաղաք                            | Վանադիում | Պղինձ     | Ցինկ    | Քրոմ      | Նիկել   | Արսեն   | Կապար   |
|----------------------------------------|-----------|-----------|---------|-----------|---------|---------|---------|
| Գերազանցումը համապատասխան ՍԹ-ից, անգամ |           |           |         |           |         |         |         |
| Վարդենիս                               | 1.1-2.0   | 18.0-24.7 | 5.3-8.9 | 19.0-42.0 | 24.3-42 | 5.5-8.0 | 1.2-1.3 |

## Կենսաբազմազանություն

Հայաստանի տարածքում առանձնացվում են 12 ֆլորիստիկ շրջաններ: Ուսումնասիրվող տեղամասը գտնվում է Սևանի ֆլորիստիկ շրջանում (Հայաստանի Հանրապետության ֆլորիստիկ շրջանները ըստ ակադեմիկոս Ա.Լ. Թախտաջյանի (1954)): Սևանի ֆլորիստիկ



շրջանը Հայաստանում հինգերորդն է բուսատեսակների թվով, որոնց թիվը 1660 է: Ֆլորիստիկ շրջանի բարձրունքային սահմանները գտնվում է (1850 – 3500 մ ծ.մ.):

*Քարտեզ.1. Հայաստանի Հանրապետության ֆլորիստիկ շրջանները ըստ ակադեմիկոս Ա.Լ. Թախտաջյանի (1954)*

«Հայաստանի Հանրապետության բնության հատուկ պահպանվող տարածքների ռազմավարությունը, պահպանության և օգտագործման բնագավառում պետական ծրագիրը և միջոցառումները հաստատելու մասին» ՀՀ կառավարության 25.09.2014 թ. N-1059-Ա որոշմամբ մարզում գործում է 1 ազգային պարկ («Սևան» ազգային պարկ) և երկու արգելավայր («Գիհու նոսրանտառային» պետական արգելավայր («Սևան» ազգային պարկի կազմում) և «Գետիկի» պետական արգելավայր):

### **Բուսական աշխարհ**


Մարզի տարածքում գերակշռում են լեռնատափաստանային, ենթալպյան և ալպյան բուսատեսակները: Վերջիններս հատկապես տարածված են Գեղամա, Վարդենիսի ու մյուս լեռնաշղթաների լեռնալանջային, բարձր լեռնային մասերում, որոնք էլ հանդիսանում են ամառային արոտավայրեր ու խոտհարքներ: Շատ քիչ է անտառային բուսականությունը, կաղնու, գիհու և որոշ այլ ծառատեսակների նոսր, թփուտային պուրակներ կան հյուսիս-արևելյան լեռնալանջերին, իսկ լճի մակարդակի իջեցման հետևանքով առաջացած տարածքներում աճեցվել են արհեստական անտառաշերտեր: Այստեղ զգալի տարածքներ են զբաղեցնում փշարմավի պուրակները:

Սևանի ավազանում լավ արտահայտված են 5 բնական գոտիներ՝ լեռնատափաստանային, լեռնաանտառային, լեռնամարգագետնային, ենթալպյան և ալպյան (քարտեզ 2): Լեռնատափաստանները զբաղեցնում են Սևանա լճի ավազանի ցածրադիր մասը (մինչև 1900-2200 մ), կլիման կիսացամաքային է, տաք ամառներով և ցուրտ ձմեռներով, լեռնաանտառները (2100-2300 մ) լայն տարածում չունեն և հիմնականում տարածված են

Փամբակի և Սևանի լեռնաշղթաների վրա: Լեռնամարգագետինները տարածված են (2300-2600 մ) բարձրություններում, կլիման ցուրտ լեռնային է (աղյուսակ 1): Ալպյան և ենթալպյան մարգագետինները զբաղեցնում են Սևանա լճի ավազանի բարձր լեռնային շրջանները (2500-2600)մ:

| Բարձրություն (մ) | Բնական գոտիներ                    | Հողատիպեր                     |
|------------------|-----------------------------------|-------------------------------|
| 1900-2200        | Լեռնատափաստաններ                  | Տիպիկ և կարբոնատային սևահողեր |
| 2100-2300        | Լեռնաանտառներ                     | Տափաստանաանտառային հողեր      |
| 2300-2600        | Լեռնամարգագետիններ                | Տափաստանամարգագետնային հողեր  |
| >2500-2600       | Ալպյան և ենթալպյան մարգագետինները | Մարգագետնային հողեր           |

Աղյուսակ 1. Սևանի ՋԿՏ բնական գոտիները և հիմնական հողատիպերը



Քարտեզ.2. Հայաստանի Հանրապետության լանդշաֆտային գոտիները

Սևանա լճի ավազանի բուսականությունը բնորոշ է Հարավային Կովկասի բարձրադիր շրջաններին, որոնք հայտնի են բույսերի մեծ բազմազանությամբ: Լճի ափամերձ

հատվածում տարածվում են երկրի ամենամեծ արհեստական անտառները: Այստեղ հանդիպում են մոտ 1600 անոթավոր բույսերի տեսակներ, որոնցից 48-ը ընդգրկված են Հայաստանի Կարմիր Գրքում (աղյուսակ 2): Սևանի ավազանում առավել խիտ բուսականությունն առկա է լեռնատափաստաններում, ենթալպյան և ալպյան գոտիներում: Սևանի լեռնաշղթաների առավել բնորոշ ծառատեսակներից են գիհիները: Սևանի պարկի կենտրոնական մասում կան կաղնու բնական անտառներ: Վարդենիսի և Գեղամա լեռներում ամենուր տարածված են մասրենու և մի շարք այլ վարդագգիների թփատեսակներ: Զրի մակարդակի նվազումից հետո լճի հատակի չորացված տարածքներն անտառապատվել են այլազգի բուսատեսակներով: Արհեստական անտառներում գերակշռում են հետևյալ ծառատեսակները՝ սոճիներ, բարդիներ, ակացիաներ և ուռենիներ:

Մարզի բնական մնացորդային անտառները տեղակայված են առանձին, ոչ մեծ կղզյակներով Արեգունյաց լեռնաշղթայի ուղղաձիգ լանջերի վրա: Առանձին ծառեր և ծառերի փոքր խմբեր հանդիպում են նաև լճափի այլ հատվածներում, ինչը վկայում է անցյալում այդ հատվածների բնական անտառապատվածության մասին: Այդ խմբավորումներն աստիճանաբար փոխարինվում են լեռնա-քսերոֆիլ թփուտների: Բնական մնացորդային անտառների ընդհանուր անտառապատ մակերեսը կազմում է մոտ 5-7 քառ. կմ: Բնական անտառները կազմավորված են եղել հիմնականում գիհի և կաղնի ծառատեսակներից, որոնք պահպանվել են մինչ օրս: Մարզի անտառներն ունեն հսկայական բնապահպանական արժեք:

Ռելիեֆային առանձնահատկությունների շնորհիվ Սևանի ավազանի բուսականությունն ունի վառ արտահայտված մոզաիկ բնույթ: Մարզի բուսական աշխարհը բավականին հարուստ և բազմազան է: Այստեղ պահպանվում է բույսերի 1,600 տեսակ, այդ թվում՝ շուրջ 60 հազվագյուտ ու անհետացող, 20 էնդեմիկ, որոնք աճում են միայն Սևանի ավազանում: Բուսատեսակների մեջ գերակշռում են լեռնատափաստանային, ենթալպյան և ալպյան բուսատեսակները: Վերջիններս հատկապես տարածված են Գեղամա, Վարդենիսի ու մյուս լեռնաշղթաների լեռնալանջային, բարձր լեռնային մասերում, որոնք էլ հանդիսանում

են ամառային արոտավայրեր ու խոտհարքներ: Ցածրադիր վայրերում աչքի են ընկնում անապատները ու կիսաանապատները, որոնք առաջացել են լճից ազատված ավազուտների վրա և ունեն երկրորդային ծագում: Այդ տեսակներից որպես ռելիկտային համակեցություններ պահպանվել են՝ տորֆային ճահճուտները, քարացրոնային և ժայռային բուսական խմբավորումները, փովոդ թփուտները՝ ցածրաճ գիհուտներ (*Juniperus depressa*) և այլն:

Ծառաթփային բուսականության հիմնական կանաչ գոտին ունի արհեստական ծագում: Հիմնականում դրանք լճի ջրերի իջեցման արդյունքում առաջացած գրունտների վրա տնկարկներն են, կատարված քսաներորդ դարի 50-80-ական թվականներին: Հիմնական անտառ կազմող ծառատեսակները հանդիսանում են սոճին, եղևնին, բարդին, ուռենին, թեղին, հացենին, ակացիան, փշատենին և այլ փշատերև ու սաղարթավոր ծառատեսակներ: Սևանա լճի ջրից ազատված հողագրունտները ծածկված են արհեստական տնկարկներով (սոճի, չիչխան, բարդի և այլ): Թփատեսակներից ամենամեծ մակերեսները զբաղեցնում է չիչխանը: Թփուտներից տարածված են՝ արոսենու (արոսենի Կուզնեցովի (*Sqrbus kuznetsqvii*), արոսենի Հայաստանի (*S.hajastana*), արոսենի հունական (*S.graeca*)), մասրենու (*Rqsa spinqsissima*, *R.canina*), ասպիրակի (*Spiraea crenata*), ալոճենու (*Crataegus qorientalis*), ուռենու (*Salix caprea*) և այլ համակեցություններ: Նորատուս և Մարտունի համայնքների մերձափնյա տարածքներում առկա են ոչ մեծ ճահիճներ, որտեղ աճում են՝ բոշխ կարճամազ (*Carex hirta*), դուր թուխ (*C.fuscus*) և այլ տեսակներ: Լճի մակարդակի իջեցման հետևանքով առաջացած տարածքներում աճեցվել են նաև արհեստական անտառաշերտեր: Այստեղ զգալի տարածքներ են զբաղեցնում փշարմավի պուրակները:

Մարզի տարածքում է գտնվում «Սևան Ազգային պարկը» /կազմավորվել է 1978թ.-ին/: Այն զբաղեցնում է Սևանի միջլեռնային գոգավորության հատակը կազմող Սևանա լճի և դրա հատակի ազատված տարածքները: Մակերեսը կազմում է 150.1 հազար հա, որից 24.9 հազ. հա առափնյա ցամաքային տարածքներ են: Այն շրջափակված է Արեգունու, Գեղամա, Վարդենիսի, Փամբակի և Սևանի լեռնաշղթաների լանջերով: Այստեղ պահպանվել են

բույսերի 1600 և կենդանիների 330 տարատեսակներ: «Սևան» ազգային պարկում առանձնացվել են հատուկ գոտիներ պաշտպանության գոտի՝ պաշտպանության խիստ ռեժիմով, հանգստի (ռեկրեացիոն) գոտի եւ տնտեսական գոտի՝ տնտեսական գործունեության համար: «Սևան» ազգային պարկի այս հատվածները չեն կազմում շարունակական կամ չընդհատվող գոտիներ (չնայած կոչվում են «գոտիներ») և սփռված են պարկի ամբողջ տարածքով մեկ: 3700 հա մակերեսով արգելոցային գոտին բաղկացած է հինգ արգելոցային տարածքներից՝ Արտանիշ, Վարդենիս, Լիճք, Նորատուս և Նորաշեն, ինչպես նաև տասն այլ պահպանվող տեղամասերից, որոնք 500մ երկարությամբ ձգվում են խոշոր գետերի ափերի երկայնքով՝ սկիզբ առնելով գետաբերանից: Այս տարածքում առկա ենդեմիկ և չափազանց հազվագյուտ բույսերի ցանկը ներառում է հետևյալը-Սիբեիս սիբեիսանման (*Falcaria falcarioides*), Մարգացնծու Ջեդելմեյերի (*Peucedanum zedelmeyerianum*), Լրջուն Առնոլդի (*Isatis arnoldiana*), Ճահճախոտ (*Eleocharis transcaucasica*), Անողնուցուկ (*Puccinellia sevangensis*), Ջրառվույտ եռատերև (*Menyanthes trifoliata*), Գազ Գյոկչայի (*Astragalus goktschaicus*), Գազ Շուշիի (*Astragalus schuschensis*), Քիմոն (*Carum komarovii*), Մարգացնծու Ջեդելմեյերի (*Peucedanum zedelmeyerianum*), Անողնուցուկ Գրոսհեյմի (*Puccinellia grossheimiana*): Ազգային պարկի և պահպանական գոտու տարածքի շուրջ 60 բուսատեսակներ օգտագործվում են որպես դեղաբույսեր, իսկ շուրջ 100 բուսատեսակներ համարվում են ուտելի:



Մկնասոխ Ռոզենի/ Scilla rosenii



Գառնատվույտ հայկական/ Oxytropis armeniaca



Հիրիկ նրբագեղ/ Iris elegantissima



Լրցուն Սևանի/ Isatis sevangensis



Հապալասենի ճահճային/ Vaccinium uliginosum

Նկար 1. Գեղարքունիքի մարզում հանդիպող կարմիր գրքյան բուսատեսակներ

Համաձայն ՀՀ կառավարության 2010 թվականի հունվարի 29-ի «ՀՀ բույսերի Կարմիր գիրքը հաստատելու մասին» N 72-Ն որոշման Գեղարքունիքի մարզում հանդիպում են կարմիրգրքյան շուրջ 39 բուսատեսակներ և 6 տեսակ սնկեր (աղյուսակ 2 և 3):

Աղյուսակ 2. Գեղարքունիքի մարզում հանդիպող կարմիրգրքյան բուսատեսակները:

| N | Լատիներեն անվանումը  | Հայերեն անվանումը  | Կատեգորիա                        |
|---|----------------------|--------------------|----------------------------------|
| 1 | Bupleurum sosnowskyi | Եզնակող Սոսնովսկու | VU B 1 ab(ii,iii) + 2 ab(ii,iii) |
|   | Manden               |                    |                                  |

|    |                                |                         |                                               |
|----|--------------------------------|-------------------------|-----------------------------------------------|
| 2  | <i>Peucedanum caucasicum</i>   | Մարգագնձու<br>կովկասյան | VU B 1 ab(ii,iii,iv) + 2<br>ab(ii,iii,iv)     |
| 3  | <i>Anthennaria caucasiaca</i>  | Կատվատոտիկ<br>կովկասյան | EN B 1 ab(iii) + 2 ab(iii)                    |
| 4  | <i>Cousinia fedorovii</i>      | Խոզանափուշ<br>Ֆյոդորովի | EN B 1 ab(i,ii) + 2 ab(i,ii)                  |
| 5  | <i>Echinops tourneforti</i>    | Ոգնագլխիկ<br>Տուրնեֆորի | EN B 1 ab(i,ii,iii,iv) + 2<br>ab(i,ii,iii,iv) |
| 6  | <i>Inula acaulis</i>           | Կղմուխ անցողուն         | EN B 1 ab(i,ii,iii) + 2<br>ab(i,ii,iii)       |
| 7  | <i>Psephellus debedicus</i>    | Պսեֆելուս դեբեդի        | EN B 1 ab(i,ii) + 2 ab(i,ii)                  |
| 8  | <i>Tomanthea daralaghezica</i> | Տոմանթեա<br>դարեգեղիսի  | EN B 1 ab(i,ii,iii) + 2<br>ab(i,ii,iii)       |
| 9  | <i>Alyssum hajastanum</i>      | Վառվռուկ Հայաստանի      | EN B 1 ab(ii) + 2 ab(ii)                      |
| 10 | <i>Didymophysa aucheri</i>     | Զուխտակ օշեյի           | CR B 1 ab(iii) + 2 ab(iii)                    |
| 11 | <i>Draba araratica</i>         | Ճարտարուկ<br>Արարատի    | EN B 1 ab(iii) + 2 ab(iii)                    |
| 12 | <i>Isatis sevangensis</i>      | Լրջուն Սևանի            | CR B 1 ab(i,ii) + 2 ab(i,ii)                  |
| 13 | <i>Dianthus grossheimii</i>    | Մեխակ Գրոսհայմի         | EN B 1 ab(i,ii,iii) + 2<br>ab(i,ii,iii)       |
| 14 | <i>Beta macrorhiza</i>         | Ճակնդեղ<br>խոշորարմատ   | VU* B 1 ab(iii) + 2 ab(iii)                   |

|    |                                 |                            |                                                |
|----|---------------------------------|----------------------------|------------------------------------------------|
| 15 | <i>Carex capitellata</i>        | Բոշխ մանրագլխիկ            | EN B 1 ab(iii) + 2 ab(iii)                     |
| 16 | <i>Vaccinium uliginosum</i>     | Հապալասենի<br>ճահճային     | EN B 1 ab(iii) + 2 ab(iii)                     |
| 17 | <i>Astragalus schuschaensis</i> | Գազ շուշիի                 | CR B 1 ab(i,ii,iii) + 2<br>ab(i,ii,iii)        |
| 18 | <i>Astragalus sukaczewii</i>    | Գազ Սուկաչովի              | VU* B 1 ab(i,ii,iii,iv) + 2<br>ab(i,ii,iii,iv) |
| 19 | <i>Astragalus xerophylus</i>    | Գազ չորասեր                | VU* B 1 ab(i,ii,iii,iv) + 2<br>ab(i,ii,iii,iv) |
| 20 | <i>Oxytropis armeniaca</i>      | Գառնաովույտ<br>հայկական    | EN B 1 ab(i,ii,iii) + 2<br>ab(i,ii,iii)        |
| 21 | <i>Oxytropis lazica</i>         | Գառնաովույտ<br>լազիստանյան | EN B 1 ab(i,ii,iii) + 2<br>ab(i,ii,iii)        |
| 22 | <i>Muscari palens</i>           | Պապլոր դժգույն             | EN B 1 ab(i,ii,iii,iv) + 2<br>ab(i,ii,iii,iv)  |
| 23 | <i>Scilla rosenii</i>           | Մկնասոխ Ռոզենի             | EN B 1 ab(i,ii,iii,iv) + 2<br>ab(i,ii,iii,iv)  |
| 24 | <i>Gladiolus hajastanicus</i>   | Թրաշուշան<br>Հայաստանյան   | EN B 1 ab(iii) + 2 ab(iii)                     |
| 25 | <i>Iris elegantissima</i>       | Հիրիկ նրբագեղ              | EN B 1 ab(i,ii,iii,iv) + 2<br>ab(i,ii,iii,iv)  |
| 26 | <i>Dracocephalum austriacum</i> | Վիշապագլուխ<br>ավստրիական  | EN B 1 ab(i,ii,iii) + 2<br>ab(i,ii,iii)        |

|    |                                  |                              |                                               |
|----|----------------------------------|------------------------------|-----------------------------------------------|
| 27 | <i>Nepeta lamifolia</i>          | Կատվադաղձ<br>խուլեղինջատերև  | EN B 1 ab(iii) + 2 ab(iii)                    |
| 28 | <i>Fritillaria collina</i>       | Արքայածաղիկ<br>բլրակային     | EN B 1 ab(i,ii,iii,iv) + 2<br>ab(i,ii,iii,iv) |
| 29 | <i>Athyrium distentifolium</i>   | Չարխոտ<br>բաժանատերև         | EN* B 1 ab(iii) + 2 ab(iii)                   |
| 30 | <i>Botrychium lunaria</i>        | Ողկուզապտեր<br>կիսալուսնասձև | VU* B 1 ab(iii) + 2 ab(iii)                   |
| 31 | <i>Polystichum braunii</i>       | Բանպոտ Բրաունի               | EN B 1 ab(iii) + 2 ab(iii)                    |
| 32 | <i>Juniperus sabina</i>          | Գիհի կազակական               | EN B 1 ab(iii) + 2 ab(iii)                    |
| 33 | <i>Najas minor</i>               | Ջրահարս փոքր                 | VU* B 1 ab(iii) + 2 ab(iii)                   |
| 34 | <i>Puccinellia grossheimiana</i> | Անողնուցուկ<br>Գրոսհեյմի     | EN B 1 ab(iii,iv) + 2<br>ab(iii,iv)           |
| 35 | <i>Groenlandia densa</i>         | Գրենլանդիա խիտ               | EN B 1 ab(iii) + 2 ab(iii)                    |
| 36 | <i>Adonis wolgensis</i>          | Կուժկոտրուկ վոլգայի          | CR B 1 ab(iii) + 2 ab(iii)                    |
| 37 | <i>Anemone ranunculoides</i>     | Վարդակակաչ<br>գորտնուկային   | EN B 1 ab(ii,iii) + 2 ab(ii,iii)              |
| 38 | <i>Sorbus hajastana</i>          | Արոսենի<br>հայաստանյան       | VU B 1 ab (iii) + 2 ab (iii); D<br>2          |
| 39 | <i>Thesium procumbens</i>        | Թեզիում փոված                | EN* B 1 ab(iii) + 2 ab(iii)                   |

Աղյուսակ 3. Գեղարքունիքի մարզում հանդիպող կարմիրգրքյան սնկերը:

| N | Լատիներեն անվանումը         | Հայերեն անվանումը     | Կատեգորիա |
|---|-----------------------------|-----------------------|-----------|
| 1 | <i>Agaricus praerimosus</i> | Շամպինիոն աղյուսակաձև | EN        |
| 2 | <i>Helvella nigricans</i>   | Հելվելա սև            | VU        |
| 3 | <i>Hericium coralloides</i> | Ոգնասունկ բուստանման  | VU        |
| 4 | <i>Mutinus caninus</i>      | Մուտինուս շնային      | EN        |
| 5 | <i>Myriostoma coliforme</i> | Միրիոստոմա ծակոտկեն   | CR        |
| 6 | <i>Sarcosoma globosum</i>   | Սարկոսոմա գնդաձև      | CR        |

## Կենդանական աշխարհը

Սևանա լիճը հանդիսանում է որպես կարևոր հանգստավայր չվող թռչունների համար, հատկապես հոկտեմբեր-դեկտեմբեր ամիսներին, մինչև լիճը ծածկվում է սառույցով: Նման հազվագյուտ թռչունները, ինչպիսիք են սպիտակ ձկնկուլը, քաջահավը, թշնան կարապը, ճչան կարապը, գեղանի կռունկը միգրացիայի ընթացքում պարբերաբար թռչում են այստեղ: Սևանի ավազանում բնակվում են մոտ 36 տեսակ կաթնասուն, որոնցից 8-ը գրանցված են Հայաստանի Կարմիր Գրքում: Հիմնական հանդիպող կաթնասուններից են՝ նապաստակը, կարմիր աղվեսը, գայլը, աքիսը և մի շարք կրծողներ (աղյուսակ 4, նկար 2): Սևանա լճի ավազանում գոյություն ունի վեց ձկնատեսակ (երկուսը գրանցված են Հայաստան Կարմիր Գրքում, երկուսն էլ՝ էնդեմիկ են): Սևանա լճի ձկների հայտնի էնդեմիկ տեսակները՝ Սևանի իշխան (*Salmo ischchan*), Սևանի կողակ (*Capoeta capoeta sevagni* կամ *Varicorhinus capoeta sevangi*), Սևանի բեղլու (*Barbus goktschaicus*) նվազում են: Հայտնի էնդեմիկ իշխանը (*Salmo ischchan*) այժմ վերացման եզրին է:



Մեծ ձկնկուլ (լատին.՝  
Phalacrocorax carbo)



Ճյան կարապ (լատին.՝ Cygnus cygnus)



Ապոլլոն (լատին.՝ Parnassius apollo)



Տուրպան (լատին.՝ Melanitta fusca)



Զրասամույր (լատին.՝ Lutra lutra)



Հայկական տափաստանային իժ  
(լատին.՝ Vipera eriwanensis)

## Նկար 2. Գեղարքունիքի մարզում հանդիպող կարմիր գրքյան կենդանատեսակներ

“Սևան” ազգային պարկի և դրա պահպանական գոտու տարածքներում հանդիպում են թռչունների 267 տեսակներ: 39 թռչնատեսակներ ընդգրկված են Հայաստանի Կարմիր գրքում: Դրանցից մեկը՝ Հայկական որորը (*Laurus armenicus*) էնդեմիկ տեսակ է: Ազգային պարկի և դրա պահպանական գոտու տարածքներում հանդիպող 267 տեսակի թռչուններից 20-ը ներկայումս հազվագյուտ են, սակայն գրանցված չեն Հայաստանի Կարմիր գրքում: Դրանք են՝ մոխրայտ սուզակը, մեծ սուզակը, սպիտակ փոքր տառեղը, մոխրագույն տառեղը, սև ցինը, տափաստանային ճուռակը, փոքր ենթարծիվը, կարմիր բադը, պիրուլը, սովորական սոխակը, փոքր քարադրը, սևուկ կտցարը, սպիտակավիզ կտցարը, գետային ջրածիծառը, ականջավոր բուն, այծկիթը, ճահճային մկնաճուռակը, սովորական կիվիկը, խայտաբղետ փայտփորը, Ժայռային ծիծեռնակը: Ընդ որում՝ սև ցինը, սովորական սոխակը և սևուկ կտցարը միգրացվող, սակայն ազգային պարկի տարածքում չբազմացող տեսակներից են: Հայաստանի Կարմիր գրքում գրանցված 39 և տնտեսական արժեք ներկայացնող 29 տեսակների վիճակը ներկայումս գնահատվում է անբավարար՝ բնական և մարդածին գործոնների բացասական ազդեցության հետևանքով: Սակավաթվությամբ և բնադրավայրերի խոցելիությամբ առանձնապես տագնապալի են

Կարմիր գրքում գրանցված հետևյալ տեսակների վիճակը՝ սև ագռավ, վարդագույն հավալուսն, գանգրափետուր հավալուսն, մեծ ձկնկուլ, տարգալկտուց, ճչան կարապ, մոխրագույն բադ, մարմարյա մրտին, սպիտակագլուխ բադ, մարգագետնային մկնաճուռակ, Եվրոպական ճնճղաճուռակ, քարարծիվ, սև անգղ, միջերկրածովյան բազե, սապսան, մոխրագույն կռունկ, խայտաբղետ քարակեռնեխ:

#### Անողնաշարավորներ

Փափկամարմիններ և Հողվածոտանիներ.

<<Սևան>> ազգային պարկի և դրա պահպանական գոտու տարածքներում հաշվարկվում են Փափկամարմինների (Mollusca) 43 տեսակներ, որոնք պատկանում են խխունջներին և լորձնամույլուկներին, և հողվածոտանիների 639 տեսակներ: Դրանցից 6-ը Հայաստանի էնդեմներ են:

#### Խեցգետիններ

Երկարաչանչ խեցգետինը (*Pontastacus leptodactylus*) Սևանա լճում հայտնաբերվել է 70-ական թվականների վերջին՝ պատահական ներմուծման շնորհիվ: Լիճ լցվող գետերում խեցգետին չի հանդիպել, սակայն խեցգետինը բավականին շատ է Սևանից սկիզբ առնող Հրազդան գետում: Երկարաչանչ խեցգետինը, ի տարբերություն այլ տեսակների, չի ձմեռում:

#### Ողնաշարավորներ

##### Ձկներ

Սևանա լճի ձկները ներկայացված են սաղմոնազգի-Salmonidae, սիգազգի Coregonidae և ծածանազգի-Cyprinidae ընտանիքներով: Սաղմոնազգիներին են պատկանում Սևանի իշխանը (Sevan Trout–*Salmo ischchan* Kessler 1877) իր 4 էկոլոգիական ենթատեսակներով՝ Ամառային բախտակ (*S. ischchan aestivalis*), Ձմեռային բախտակ (*S. ischchan ischchan*),

Գեղարքունի (S. ischchan gegarkuni), Բոջակ (S. ischchan danilewskii): Միգրացիների ընտանիքի ներկայացուցիչը 1920-30-ական թվականներին լճում կլիմայավարժեցված սիգն է (Whitefish – Coregonus lavaretus): Ծածանազգի ձկնատեսակներին են պատկանում լճի երկու էնդեմիկները՝ Սևանի կողակը (Khrami carp-Varicorhinus capoeta sevangi) և Սևանի բեղլուն (Sevan barble–Barbus goktschaicus): 1980-ական թվականների սկզբից լճում սկսել է հանդիպել նաև արծաթափայլ լճածածանը (Crucian carp–Carassius auratus gibelio), որը պատահաբար լիճ է ներթափանցել Արարատյան դաշտի ջրային համակարգերից: 1987 թվականից Սևանա լճի երկու էնդեմիկ տեսակ՝ Սևանի իշխանը և Սևանի բեղլուն, ընդգրկված են Հայաստանի Կարմիր գրքում:

#### Երկկենցաղներ

<<Սևան>> ազգային պարկի և դրա պահպանական գոտու տարածքներում հանդիպում են երկկենցաղների 4 տեսակները:

#### Սողուններ

“Սևան” ազգային պարկի և դրա պահպանական գոտու տարածքներում հանդիպում են սողունների 16 տեսակներ, որոնցից 11 տեսակներ պատկանում են մողեսներ (Lacertilia) կարգին, իսկ 5 տեսակ՝ օձեր (Serpentes) կարգին: Դրանցից Հայաստանի Կարմիր գրքում գրանցված են խայտաբղետ մողեսիկը (E.a.transcaucasica) և փոքրասիական մողեսը (Lacerta parva):

#### Կաթնասուններ

“Սևան” ազգային պարկի և դրա պահպանական գոտու տարածքներում հանդիպում են կաթնասունների 44 տեսակներ, որոնք պատկանում են հետևյալ կարգերին.

- Միջատակերներ (Insectivora),
- Կրծողներ (Rodentia),
- Նապաստակներ (Logomorpha),
- Չղջիկներ (Chiroptera),

- Գիշատիչներ (Carnivora),
- Սմբակավոր/կճղակավոր կաթնասուններ (Artiodactyla):

Նշված տեսակներից 6-ը գրանցված են Հայաստանի Կարմիր գրքում (վայրենակերպը, ջրասամույրը, գորշ արջը, խայտակգաքիսը, անտառային կատուն, բեզդարյան այծը):

Համաձայն ՀՀ կառավարության 2010 թվականի հունվարի 29-ի «ՀՀ կենդանիների Կարմիր գիրքը հաստատելու մասին» N 71-Ն որոշման Գեղարքունիքի մարզի տարածքում հանդիպում է շուրջ 104 կարմիրգրքյան տեսակ:

Աղյուսակ 4. Գեղարքունիքի մարզում հանդիպող կարմիրգրքյան կենդանատեսակները:

| N  | Լատիներեն<br>անվանումը            | Հայերեն անվանումը   | Կատեգորիա     |
|----|-----------------------------------|---------------------|---------------|
| 1  | <i>Bithynia troscheli</i>         | Տրոշելի խիտունջ     | CR B2a        |
| 2  | <i>Acroloxus lacustris</i>        | Լճային խիտունջ      | CR B2ab(iii)  |
| 3  | <i>Planorbis carinatus</i>        | Կատարավոր խիտունջ   | EN B 1a+B2    |
| 4  | <i>Gyraulus albus</i>             | Սպիտակ խիտունջ      | EN B 1a+B2a   |
| 5  | <i>Gyraulus laevis</i>            | Հարթ խիտունջ        | EN B 1a+B2a   |
| 6  | <i>Orculella bulgarica</i>        | Բուլղարական խիտունջ | CR B1a+ B2a   |
| 7  | <i>Gomphocerus<br/>armeniacus</i> | Մորեխ հայկական      | VU B 1a +B 2a |
| 8  | <i>Bradyporus dilatatus</i>       | Հաստածղրիղ լայնացած | VU B1a+B2a    |
| 9  | <i>Saga pedo Pallas</i>           | Սագա տափաստանային   | CR B1a+B2a    |
| 10 | <i>Dyschirius sevanensis</i>      | Սևանյան գնայուկ     | EN B 1a+B 2a  |

|    |                               |                        |                        |
|----|-------------------------------|------------------------|------------------------|
| 11 | <i>Mylabris sedilithorax</i>  | Թամբակուրծք թարախահան  | EN B 1a                |
| 12 | <i>Dorcadion semilucens</i>   | Կիսափայլ երկարաբեղիկ   | EN B 1a+B2a            |
| 13 | <i>Dorcadion cineriferum</i>  | Մոխրագույն երկարաբեղիկ | EN B 1a+B2a            |
| 14 | <i>Parnassius mnemosyne</i>   | Մնեմոզինա              | VU B 1a                |
| 15 | <i>Parnassius apollo</i>      | Ապոլոն                 | VU A1cde               |
| 16 | <i>Colias aurorina</i>        | Ավրորինա դեղնաթիթեռ    | VU B 1b(iii)+B 2b(iii) |
| 17 | <i>Brenthis ino</i>           | Բրենթիս ինո            | VU B 1a+B2             |
| 18 | <i>Maculineaalcon</i>         | Ալկոն կապտաթիթեռ       | VU B 1a+B2a            |
| 19 | <i>Maculinea arion</i>        | Արիոն կապտաթիթեռ       | VU B 1a+B2a            |
| 20 | <i>Maculinea nausithous</i>   | Մթնշաղային կապտաթիթեռ  | VU B 1a+B2a            |
| 21 | <i>Agrodiaetus ninae</i>      | Նինայի կապտաթիթեռ      | VU B1a+B2a             |
| 22 | <i>Agrodiaetus turcicus</i>   | Թուրքական կապտաթիթեռ   | VU B2a                 |
| 23 | <i>Anthophora cinerea</i>     | Մոխրագույն մեղու       | VU B1a+B2a             |
| 24 | <i>Anthophora robusta</i>     | Ամրակազմ մեղու         | VU B1a+B2a             |
| 25 | <i>Tetralonia macroglossa</i> | Երկարալեզու մեղու      | EN B2a                 |
| 26 | <i>Bombus armeniacus</i>      | Իշամեղու հայկական      | VU B1a+B2a             |
| 27 | <i>Bombus pratorum</i>        | Իշամեղու մարգագետնային | VU B1a+B2a             |
| 28 | <i>Bombus niveatus</i>        | Իշամեղու ձնափայլ       | VU B1a+B2a             |
| 29 | <i>Bombus portshinskii</i>    | Պորչինսկու իշամեղու    | VU B1a+B2a             |
| 30 | <i>Bombus daghestanicus</i>   | Իշամեղու դաղեստանյան   | VU B1a+B2a             |

|    |                                      |                                     |                        |
|----|--------------------------------------|-------------------------------------|------------------------|
| 31 | <i>Salmo ischchan aestivali</i>      | Ամառային բախտակ                     | CR A2cd                |
| 32 | <i>Salmo ischchan</i>                | Գեղարքունի                          | CR A2cd                |
| 33 | <i>Varicorhinus capoeta sevangi</i>  | Սևանի կողակ                         | VU A1cd                |
| 34 | <i>Barbus goetschaicus</i>           | Սևանի բեղլու                        | VU A2cd                |
| 35 | <i>Eremias arguta transcaucasica</i> | Անդրկովկասյան<br>բազմագույն մողեսիկ | CR A2c; B2ab (ii, iii) |
| 36 | <i>Darevskia praticola</i>           | Մարգագետնային մողես                 | VU B1ab(iii)+2a        |
| 37 | <i>Darevskia rostombekovi</i>        | Ռոստոմբեկովի մողես                  | EN B2ab (ii, iii)      |
| 38 | <i>Darevskia unisexualis</i>         | Սպիտակափոր մողես                    | VU B1a                 |
| 39 | <i>Vipera (Pelias) eriwanensis</i>   | Հայկական<br>լեռնատափաստանային իժ    | VU B1ab(iii, v)        |
| 40 | <i>Podiceps grisegena</i>            | Մոխրապտ սուզակ                      | VU D1                  |
| 41 | <i>Pelecanus onocrotalus</i>         | Վարդագույն հավալուսն                | VU B1ab(iii)           |
| 42 | <i>Pelecanus crispus</i>             | Գանգրափետուր հավալուսն              | EN D                   |
| 43 | <i>Phalacrocorax carbo</i>           | Մեծ ձկնկուլ                         | VU B1ab(iii)           |
| 44 | <i>Phalacrocorax pygmaeus</i>        | Փոքր ձկնկուլ                        | VU B1ab(iii)+2a        |
| 45 | <i>Plegadis falcinellus</i>          | Քաջահավ                             | VU D1                  |
| 46 | <i>Platalea leucordi</i>             | Տարգալակտուց                        | EN D                   |
| 47 | <i>Phoenicopterus roseu</i>          | Սովորական ֆլամինգո                  | DD                     |
| 48 | <i>Cygnus olor</i>                   | Թռչան կարապ                         | VU B1ab(iii)+2a        |

|    |                              |                     |                           |
|----|------------------------------|---------------------|---------------------------|
| 49 | <i>Cygnus cygnus</i>         | Ճչան կարապ          | VU B1ab(iii)+2a           |
| 50 | <i>Cygnus columbianus</i>    | Փոքր կարապ          | VU B1ab(iii)+2ab(iii)     |
| 51 | <i>Oxyura leucocephal</i>    | Սպիտակագլուխ բադ    | EN A2bcde+4bcde           |
| 52 | <i>Anser anser</i>           | Մոխրագույն սազ      | VU D1                     |
| 53 | <i>Branta ruficollis</i>     | Կարմրախածի սազ      | EN A2bcd+3bcd+4bcd:       |
| 54 | <i>Tadorna ferruginea</i>    | Կարմիր բադ          | VU B1ab(iii)+2ab(iii)     |
| 55 | <i>Tadorna tadorna</i>       | Խայտաբադ            | LC                        |
| 56 | <i>Anas clypeat</i>          | Լայնակտուց բադ      | VU B1ab(iii)+2ab(iii) 241 |
| 57 | <i>Aythya nyroca</i>         | Սպիտակաաչք սուզաբադ | VU D1                     |
| 58 | <i>Anser erythropus</i>      | Ծվվան սազ           | VU A2bcd+3bcd+4bcd        |
| 59 | <i>Anser albifrons</i>       | Սպիտակաճակատ սազ    | VU B1ab(iii)+2ab(iii)     |
| 60 | <i>Melanitta fusca</i>       | Տուրպան             | DD                        |
| 61 | <i>Milvus milvus</i>         | Կարմիր ցին          | EN B1a; D                 |
| 62 | <i>Haliaeetus albicilla</i>  | Սպիտակապոչ արծիվ    | EN B1a; D                 |
| 63 | <i>Gypaetus barbatus</i>     | Գառնանգղ            | VU D1                     |
| 64 | <i>Neophron percnopterus</i> | Գիշանգղ             | EN A2bcde+3bcde+4bcde     |
| 65 | <i>Gyps fulvus</i>           | Սպիտակագլուխ անգղ   | VU D1                     |
| 66 | <i>Accipiter gentilis</i>    | Ցախաքլորավորս       | VU B1ab(iii)+2ab(iii); D1 |
| 67 | <i>Aquila pomarina</i>       | Փոքր ենթարծիվ       | VU D1                     |
| 68 | <i>Aquila clanga</i>         | Մեծ ենթարծիվ        | VU C2a(ii)                |

|    |                                    |                               |                        |
|----|------------------------------------|-------------------------------|------------------------|
| 69 | <i>Aquila nipalensis orientali</i> | Տափաստանային արծիվ            | VU C2a(i); D1          |
| 70 | <i>Aquila chrysaetos</i>           | Քարարծիվ                      | VU D1                  |
| 71 | <i>Hieraaetus pennatus</i>         | Գաճաճ արծիվ                   | VU D1                  |
| 72 | <i>Falco naumanni</i>              | Տափաստանային հողմավար<br>բազե | VU A2bce+3bce+4bce     |
| 73 | <i>Falco columbarius</i>           | Աղավնաբազե                    | DD                     |
| 74 | <i>Falco peregrinus</i>            | Սապսան                        | VU D1                  |
| 75 | <i>Tetraogallus caspius</i>        | Վայրի հնդկահավ                | VU B1a+2a; C2a(i); D 1 |
| 76 | <i>Arthropoides virgo</i>          | Գեղանի կռունկ                 | VU B1ab(iii)+2ab(iii)  |
| 77 | <i>Grus grus</i>                   | Մոխրագույն կռունկ             | EN D                   |
| 78 | <i>Porphyrio porphyrio</i>         | Սուլթանական հավ               | DD                     |
| 79 | <i>Haematopus ostralegus</i>       | Կտցար կաշաղակ                 | VU B1ab(iii)           |
| 80 | <i>Chettusia gregaria</i>          | Ճախրուկ                       | EN B1a+B2a; Ca(i); D   |
| 81 | <i>Limosa limosa</i>               | Մեծ իլիկակտցար                | VU A2b                 |
| 82 | <i>Numenius arquata</i>            | Մեծ արորիկ                    | VU A2b                 |
| 83 | <i>Gallinago media</i>             | Կրկնակտցար                    | VU B1ab(iii)+2ab(iii)  |
| 84 | <i>Himantopus himantopus</i>       | Ոտնացուպիկ                    | VU D1                  |
| 85 | <i>Recurvirostra avosetta</i>      | Բզակտուց                      | VU D1                  |
| 86 | <i>Glareola pratincol</i>          | Մարգագետնային<br>ծիծառակտցար  | VU D1                  |

|     |                              |                                  |                           |
|-----|------------------------------|----------------------------------|---------------------------|
| 87  | <i>Glareola nordmanni</i>    | Տափաստանային<br>ծիծառակտցար      | VU B1ab(iii)+2ab(iii); D1 |
| 88  | <i>Larus armenicus</i>       | Հայկական որոր                    | VU B1ab(iii)+2ab(iii)     |
| 89  | <i>Sterna nilotica</i>       | Որորակտուց ջրածիծառ              | VU D1                     |
| 90  | <i>Chlidonias hybrida</i>    | Սպիտակապտ ջրածիծառ               | VU D1                     |
| 91  | <i>Bubo bubo</i>             | Բվեճ                             | VU B1a; C2a(i); D1        |
| 92  | <i>Coracias garrulus</i>     | Ներկարար                         | VU B1ab(iii)              |
| 93  | <i>Motacilla citreol</i>     | Դեղնագլուխ խաղտտիկ               | VU D                      |
| 94  | <i>Tichodroma muraria</i>    | Կարմրաթև մագլցող                 | DD                        |
| 95  | <i>Neomys schelkovnikovi</i> | Շելկովնիկովի կոտուրա             | EN B1a+2a                 |
| 96  | <i>Suncus etruscus</i>       | Պստիկ սպիտակատամ                 | VU B2a (ii)               |
| 97  | <i>Rhinolophus mehelyi</i>   | Մեհելիի պայտաքիթ չղջիկ           | B1a+2ab(iii)              |
| 98  | <i>Myotis hajastanicus</i>   | Հայկական գիշերաչղջիկ             | CR B1a+D                  |
| 99  | <i>Plecotus auritus</i>      | Գորշ ականջեղ                     | VU B1a                    |
| 100 | <i>Tadarida teniotis</i>     | Ծալքաշուրթ<br>լայնականջ<br>չղջիկ | DD                        |
| 101 | <i>Ursus arcto</i>           | Գորշ արջ                         | VU B1 b(iii)              |
| 102 | <i>Vormela peregusna</i>     | Խայտաքիս                         | VU A2c+B1 b(iii)          |
| 103 | <i>Lutra lutra</i>           | Ջրասամույր                       | EN D                      |
| 104 | <i>Capra aegagrus</i>        | Բեզուրյան այծ                    | VU C2a(i)                 |

Համաձայն գիտական և գրական ուսումնասիրությունների հայցվող տարածքում բացակայում են Կարմիրգրքյան տեսակները:

Շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում ընկերությունը նախատեսում է առաջնորդվել ՀՀ կառավարության 31 հուլիսի 2014 թվականի «ՀՀ բուսական աշխարհի օբյեկտների պահպանության և բնական պայմաններում վերարտադրության նպատակով դրանց օգտագործման կարգը սահմանելու մասին» N781-Ն որոշման պահանջների համաձայն: Շինարարության փուլում աշխատանքների ընթացքում կներգրավվի մասնագետ՝ ով կվերահսկի շինարարական գործընթացը, և այն պարագայում, երբ կհանդիպեն «Կարմիր բաղ թռչուն» և «Սպիտակավոր մողես» խոցելի տեսակները և/կամ այլ կենդանիների բնադրավայրեր, կիրականացվեն պահպանման միջոցառումներ՝ համաձայն վերը նշված որոշման պահանջների:

### **Բնության հուշարձաններ**

Սևանի ավազանը հարուստ է նաև բնության հուշարձաններով (ՀՀ կառավարության 2008 թվականի օգոստոսի 14-ի N 967-Ն որոշում), որոնցից հիշատակման արժանի են՝ Վարդենիսի լեռնաշղթայի հրաբխային և խարամային կոները (Աժդահակ, Կարմրասար, Սպիտակասար լեռնագագաթները), Լանջաղբյուր, Կարմիր գյուղ, Գեղարքունիք գյուղերի շրջակայքի ժայռային մերկացումները, Սևանի լեռնաշղթայի լանջերի (Շորժա գյուղի շրջակայքում) օֆիոլիտային ապարների մերկացումները, Արտանիշի թերակղզու կրաքարերի մերկացումները, Սպիտակասար լեռնագագաթի արևելյան մասում օբսիդիանների մերկացումները, Լճաշեն գյուղի, Գավառ քաղաքի շրջակայքի էյուվիալ քարացրոնները (չինգիլներ), Գրիձոր, Արգիճի գետերի կիրճերը, Մարտունի, Գրիձոր, Գեղարքունիք, Աստղաձոր, Վարդենիս գետերի վերին հոսանքների տաշտակաձև հովիտները, Լիճքի, Կարճաղբյուրի, Գրիձորի, Հացառատի, Երանոսի, Գավառի հանքային և խմելու ջրերի աղբյուրները, Արեգունի լեռնաշղթայի կաղնու և գիհու նոսր անտառները, Արեգունու, Սևանի, Փամբակի լեռնաշղթաների անտառային տարբեր մնացուկային ձևերը,

Մասրիկ, Վարդենիս գետերի հովիտների ճահճոտ մարգագետինները և եղեգնուտները, Գեղամա լեռնաշղթայի արևելյան լանջերի քարացրոնները, Արգիճի գետի ոլորանները և ճահճոտ հովիտը, Վարդենիսի լեռնաշղթայի հյուսիսային լանջերից հոսող գետերի կիրճերը՝ անտառային մնացուկային ձևերով:

### ***Պատմության Եվ Մշակույթի Անշարժ Հուշարձաններ***

Հայաստանի Հանրապետության Կառավարություն 9 Հունվարի 2003 Թվականի N 80-Ն Որոշմամբ հաստատված են Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի Մարզի Պատմության Եվ Մշակույթի Անշարժ Հուշարձանների Պետական Ցուցակը, ըստ որի Գեղարքունիքի մարզի Գավառ քաղաքում հաշվառված են հետևյալ հուշարձանները:

#### **Գավառ (Կամ) քաղաք**

| Հուշարձանի համարը | Հուշարձանի ենթահամարը (ենթահամարը) |        |           | Հուշարձանախումբը, հուշարձանը       | Ժամանակը                  | Տեղը բնակավայրի նկատմամբ, հասցեն | Նշանակությունը հանրապետական, տեղական | Ծանոթագրություն                               |
|-------------------|------------------------------------|--------|-----------|------------------------------------|---------------------------|----------------------------------|--------------------------------------|-----------------------------------------------|
| 1.                | 2.                                 | 3.     | 4.        | 5.                                 | 6.                        | 7.                               | 8.                                   | 9.                                            |
| 1.                |                                    |        |           | ԱՄՐՈՑ «ԱՂԻ ԳՅՈՒՆ»                  | մթա 2-1 հզմ, 10-17-րդ դդ. | 5 կմ ամ                          | Հ                                    | Գեղամա լեռների հս ստորոտին                    |
|                   | 1.1.                               |        |           | գյուղատեղի «Աղի գյուղ»             | 10-17-րդ դդ.              | 5 կմ ամ                          | Տ                                    |                                               |
|                   |                                    | 1.1.1. |           | եկեղեցի                            | 13-14-րդ դդ.              |                                  | Տ                                    | գյուղատեղի՝ կնտ-ում, բլրի գագաթին, ավերված    |
|                   |                                    | 1.1.2. |           | ջրաղաց                             | 13-14-րդ դդ.              |                                  | Տ                                    | ջրամբարից հս՝ ավերված                         |
|                   |                                    | 1.1.3. |           | ջրամբար                            | մթա 2-1 հզմ               |                                  | Հ                                    | մեծ ջրբաժանում                                |
| 2.                |                                    |        |           | ԱՄՐՈՑ «ԴԱՐԻ ԳԼՈՒԽ» («ԲԵՐԴԻ ԳԼՈՒԽ») | մթա 2-1 հզմ               | հս-աե մասում                     | Հ                                    |                                               |
|                   | 2.1.                               |        |           | գերեզմանոց «Դարի գլուխ»            | 15-20-րդ դդ.              |                                  | Տ                                    |                                               |
|                   |                                    | 2.1.1. |           | մատուռ ս. Ստեփանոս                 | 1374 թ.                   |                                  | Տ                                    | պատվիրատու՝ Ամիր Վահապ                        |
|                   |                                    |        | 2.1.1.1.  | խաչքար՝ Ավագի                      | 14-15-րդ դդ.              |                                  | Հ                                    | բեմի ճակատին                                  |
|                   |                                    |        | 2.1.1.2.  | խաչքար՝ Մարգարի                    | 15-րդ դ.                  |                                  | Հ                                    | բեմի ճակատին                                  |
|                   |                                    |        | 2.1.1.3.  | խաչքար                             | 15-րդ դ.                  |                                  | Հ                                    | բեմի ճակատին                                  |
|                   |                                    |        | 2.1.1.4.  | խաչքար                             | 15-16-րդ դդ.              |                                  | Հ                                    | բեմի ճակատին, քիվն՝ արձանագիր                 |
|                   |                                    |        | 2.1.1.5.  | խաչքար                             | 15-16-րդ դդ.              |                                  | Հ                                    | բեմի ճակատին                                  |
|                   |                                    |        | 2.1.1.6.  | խաչքար Շամամի                      | 1537 թ.                   |                                  | Հ                                    | մատուռի հվ պատին, մուտքից վեր                 |
|                   |                                    |        | 2.1.1.7.  | խաչքար                             | 16-րդ դ.                  |                                  | Հ                                    | ազուցված հվ պատին, վերին ծախ անկյունը՝ կտրված |
|                   |                                    |        | 2.1.1.8.  | խաչքար                             | 16-րդ դ.                  |                                  | Հ                                    | հվ պատին, մուտքից աջ                          |
|                   |                                    |        | 2.1.1.9.  | խաչքար Թամամի                      | 16-17-րդ դդ.              |                                  | Հ                                    | ազուցված խորանի ծախ կողմում                   |
|                   |                                    |        | 2.1.1.10. | խաչքար                             | 16-17-րդ դդ.              |                                  | Հ                                    | ազուցված խորանից աջ                           |

|  |         |          |                                       |              |  |   |                                                                                                      |
|--|---------|----------|---------------------------------------|--------------|--|---|------------------------------------------------------------------------------------------------------|
|  |         | 2.1.1.11 | խաչքար Մարգարի                        | 16-17-րդ դդ. |  | Հ | բեմի ճակատին                                                                                         |
|  |         | 2.1.1.12 | խաչքար Մարգարի                        | 17-րդ դ.     |  | Հ | մատուռի բեմի ճակատին                                                                                 |
|  |         | 2.1.1.13 | խաչքար                                | 17-րդ դ.     |  | Հ | ազուցված բեմին                                                                                       |
|  |         | 2.1.1.14 | խաչքար Կիրակոսի                       | 17-րդ դ.     |  | Հ | բեմի ճակատին                                                                                         |
|  | 2.1.2   |          | խաչքար                                | 9-10-րդ դդ.  |  | Հ | ամ մասում, մամռապատ                                                                                  |
|  | 2.1.3   |          | խաչքար                                | 10-11-րդ դդ. |  | Հ | ընդհանուր պատվանդանին, կողքի խաչքարի չի պահպանվել                                                    |
|  | 2.1.4   |          | խաչքար՝ Մարգարիտի                     | 12-13-րդ դդ. |  | Հ |                                                                                                      |
|  | 2.1.5   |          | խաչքար                                | 13դ.         |  | Հ | ս. Ստեփանոս մատուռից հվ, երկաստիճան պատվանդանին, որին մատուռի կառուցման շինարարական արձանագրությունը |
|  | 2.1.6   |          | խաչքար Խաս Խաթունի, Դուժի և Զեդինի    | 1451 թ.      |  | Հ | ամ մասում, ընկած գետնին                                                                              |
|  | 2.1.7   |          | խաչքար Սուրմա Խաթունի                 | 15-16-րդ դդ. |  | Հ | ընդհանուր պատվանդանին կանգնեցված խաչքարերից աջակողմյանը                                              |
|  | 2.1.8   |          | խաչքար                                | 15-16-րդ դդ. |  | Հ | մատուռից 10 մ ամ                                                                                     |
|  | 2.1.9   |          | խաչքար՝ Ստեփանոս եպիսկոպոսի           | 1513 թ.      |  | Հ | ս. Ստեփանոս մատուռից հվ                                                                              |
|  | 2.1.10. |          | խաչքար՝ Աղուաշի, Ուսեբի, Աբրահամի     | 1516 թ.      |  | Հ | պատվանդանին                                                                                          |
|  | 2.1.11. |          | խաչքար՝ Գալուստի, Խաթուն Խասի և այլոց | 1521 թ.      |  | Հ | ամ մասում, բարձր պատվանդանին                                                                         |
|  | 2.1.12. |          | խաչքար՝ Ղուլիջանի                     | 1524 թ.      |  | Հ | պատվանդանին                                                                                          |
|  | 2.1.13. |          | խաչքար                                | 1530 թ.      |  | Հ | խրված հողի մեջ                                                                                       |
|  | 2.1.14. |          | խաչքար՝ Գոհարի                        | 1531 թ.      |  | Հ | ամ մասում, բարձր պատվանդանին                                                                         |
|  | 2.1.15. |          | խաչքար՝ Գուլթանի                      | 1531 թ.      |  | Հ | ընդհանուր պատվանդանին կանգնեցված զույգ խաչքարերից ձախակողմյանը                                       |
|  | 2.1.16. |          | խաչքար՝ Շահամելիցի                    | 1531 թ.      |  |   |                                                                                                      |
|  | 2.1.17. |          | խաչքար՝ Շահսուլթանի                   | 1534 թ.      |  | Հ | ընդհանուր պատվանդանին կանգնեցված զույգ խաչքարերից աջակողմյանը                                        |
|  | 2.1.18. |          | խաչքար՝ Շաղուպաթ աղի                  | 1534 թ.      |  | Հ | ընդհանուր պատվանդանին կանգնեցված զույգ խաչքարերից աջակողմյանը                                        |
|  | 2.1.19. |          | խաչքար՝ Սարգսի և այլոց                | 1534 թ.      |  | Հ | ամ մասում, բարձր պատվանդանին կանգնեցված զույգ խաչքարերից ձախակողմյանը                                |
|  | 2.1.20. |          | խաչքար՝ Մաթեոս քահանայի               | 1534 թ.      |  | Հ | ամ մասում, բարձր պատվանդանին կանգնեցված զույգ խաչքարերից աջակողմյանը                                 |
|  | 2.1.21. |          | խաչքար՝ Գրիգոր աբեղայի                | 1534 թ.      |  | Հ | իրար կողք կանգնեցված 3 խաչքարերից կենտրոնինը                                                         |
|  | 2.1.22. |          | խաչքար՝ Վելարի, Միրանշի և Եղիսաբեթի   | 1535 թ.      |  | Հ | առ մասում, պատվանդանին                                                                               |
|  | 2.1.23. |          | խաչքար՝ Սուլթանի, Մարանի              | 1536 թ.      |  | Հ | առ մասում, պատվանդանին                                                                               |
|  | 2.1.24. |          | խաչքար՝ Ստեփանոսի և Պետրոսի           | 1536 թ.      |  | Հ | պատվանդանին                                                                                          |
|  | 2.1.25. |          | խաչքար՝ Զիչաքի, Մխիթարի, Շամամի ...   | 1536 թ.      |  | Հ | առ մասում, պատվանդանին, եզրերը կոտրված                                                               |
|     | 42.3. |  |  | խաչքար                                            | 15-16-րդ<br>դդ.                   |                 | Հ | ամ պատի տակ, ներքուստ,<br>ստորին ձախ անկյունը<br>կտրված                             |
|     | 42.4. |  |  | խաչքար՝ Չիչագի                                    | 1534 թ.                           |                 | Հ | մատուռի ներսում, մեկ շարքով<br>կանգնեցված 5 խաչքարերից<br>աջից 4-րդն է              |
|     | 42.5. |  |  | խաչքար                                            | 16-րդ դ.                          |                 | Հ | մատուռի ներսում, մեկ շարքով<br>կանգնեցված 5 խաչքարերից<br>ձախից 1-ինը               |
|     | 42.6. |  |  | խաչքար՝ Մարգարի և<br>Պահալունի                    | 16-րդ դ.                          |                 | Հ | բեմին                                                                               |
|     | 42.7. |  |  | խաչքար Պահալունի                                  | 16-17-րդ<br>դդ.                   |                 | Հ | մատուռի ներսում, մեկ շարքով<br>կանգնեցված 5 խաչքարերից<br>աջից 3-րդը, կազմող՝ Տրդատ |
|     | 42.8. |  |  | խաչքար                                            | 16-17-րդ<br>դդ.                   |                 | Հ | մատուռի ներսում, մեկ շարքով<br>կանգնեցված 5 խաչքարերից<br>աջից 1-ինը                |

### 3. ՍՈՑԻԱԼ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

ՀՀ Գեղարքունիքի մարզը գտնվում է Հայաստանի Հանրապետության տարածքի արևելքում՝ շրջապատելով Սևանա լիճը: Մարզը հյուսիսից սահմանակից է ՀՀ Լոռու և Տավուշի մարզերին, արևելքից՝ պետական սահմանով, սահմանակից է Ադրբեջանին, հարավից՝ ՀՀ Վայոց ձորի մարզին, հարավ-արևմուտքից՝ ՀՀ Արարատի մարզին և արևմուտքից՝ ՀՀ Կոտայքի մարզին: Մարզի ամենաերկար ձգվածությունը հյուսիս-արևմուտքից հարավարևելք կազմում է 115 կմ, արևմուտքից արևելք՝ 85 կմ, ամենախոր իջվածքը Գետիկ գետի կիրճն է (Ձորավանք գյուղ, 1 325 մ), ամենաբարձր կետը՝ Աժդահակ լեռան գագաթը (3 598 մ): Բարձր լեռներն են Սպիտակասարը (3 555 մ), Վարդենիսը (3 522 մ), Գեղասարը (3 446 մ): Ամենաերկար գետերն են Արգիճին (51 կմ), Գավառագետը (47 կմ) և Մասրիկը (45 կմ): Ամենամեծ լիճը Սևանա լիճն է (1 275.6 կմ<sup>2</sup>, բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1 900 մ), համեմատաբար փոքր լճերից են Աժդահակի և Աղմաղանի խառնարանային լճերը՝ մինչև 50 մ տրամագծով և 15 մ խորությամբ: Մարզի տարածքով անցնում է Երևան-Սևան-Դիլիջան հանրապետական նշանակության մայրուղին: Գործում է Սելիմի լեռնանցքով անցնող «Հարավ-Հյուսիս» մայրուղին: ՀՀ Գեղարքունիքի մարզում է գտնվում Սևանա լիճը, որը ոչ միայն մարզի, այլ նաև հանրապետության համար ունի առանձնահատուկ կարևորություն: Այն Հարավային Կովկասի քաղցրահամ ջրերի ամենամեծ ավազանն է: Լիճն էական ազդեցություն ունի ողջ մարզի ոչ միայն բնապահպանական հավասարակշռության, այլ նաև տնտեսության վրա: Մարզի տարածքում է գտնվում «Սևան» ազգային պարկը (կազմավորվել է 1978թ.): Այն զբաղեցնում է Սևանի միջլեռնային գոգավորության հատակը կազմող Սևանա լճի և դրա հատակից ազատված տարածքները: Մակերեսը կազմում է 150.1 հազ.հա, որից 24.9 հազ.հա՝ առափնյա ցամաքային տարածքներ են: Լիճը շրջափակված է Արեգունու, Գեղամա, Վարդենիսի, Փամբակի և Սևանի լեռնաշղթաների լանջերով: Այստեղ պահպանվել են բույսերի 1 600 և կենդանիների 330 տարատեսակներ: Մարզում են գտնվում բազմաթիվ հանքավայրեր, որոնցից են ոսկու, դոլոմիտի, բազալտի, ավազի, հրաբխային տուֆի

հանքավայրերը: Շահագործվող հանքավայրերից մի մասին բաժին է ընկնում երկրում արդյունահանվող հանքաքարի զգալի մասը: 2012թ.-ին մարզի տնտեսության հիմնական հատվածների տեսակարար կշիռները ՀՀ համապատասխան հատվածների ընդհանուր ծավալում կազմել են. արդյունաբերություն՝ 1.9 %, գյուղատնտեսություն 18.1 %, շինարարություն 2.7 %, մանրածախ առևտուր 1.0 %, ծառայություններ՝ 0.8 %: Մարզի տնտեսության առաջատար ճյուղը գյուղատնտեսությունն է, հատկապես հացահատիկի, կարտոֆիլի, բանջարեղենի և անասնաբուծական մթերքի արտադրությունները:



Համայնքը ժամանակին հանդիսացել է արդյունաբերական հզոր կենտրոն: Քաղաքում գործել են յուղ-պանրի, ավտոնորոգման, կաբելի, սարքաշինական, «Սեւան» հանքային ջրերի, փայտամշակման գործարանները, տրիկոտաժի, կարի, կոշիկի ֆաբրիկաները, մսի կոմբինատը, «Դիպոլ» արտադրական միավորումը: Սակայն այսօր արտադրությունը ամբողջովին դադարեցված է: Այժմ քաղաքում հաշվառված են և գործում են արտադրական, սպասարկման մասնավոր ձեռնարկություններ և անհատ ձեռներեցներ: Գավառ քաղաքում 2014 թվականից իր գործունեությունն է սկսել «Սևան» հանքային ջրերի գործարանը, որը սակայն ամբողջ հզորությամբ չի աշխատում սպառման շուկայի սահմանափակության պատճառով՝ սպառման հիմնական շուկա ՀՀ-ն է: Համայնքում

գործում են նաև կոշիկի մի քանի փոքր արտադրամասեր-կոոպերատիվներ, որոնց սպառման հիմնական շուկան Գավառ համայնքն է իր տարածաշրջանով: Կոշկեղենի արտադրության մի մասն այնուամենայնիվ արտահանվում է: Գավառում գործում է նաև լիմոնադի արտադրամաս, որի սպառման հիմնական շուկան արդեն ունի մարզային մասշտաբներ: Քաղաքում գործում են նաև տրիկոտաժի փոքր արտադրություն և կաթնամթերքների մթերման կետ, ինչպես նաև մի շարք հացի փոեր եւ թխվածքի արտադրամասեր, որոնց արտադրանքը հիմնականում սպառվում է Գեղարքունիքի մարզում և սահմանափակ ծավալներով՝ նաև մայրաքաղաք Երևանում: Համայնքի տարածքը բավականին հարուստ է պատմամշակութային շինություններով: Գավառի Սուրբ Աստվածածին եկեղեցին, որը կառուցվել է 1902-1905թթ.բարերար Կոլոտ Հայրապետի և բնակիչների կողմից, առաջին պատարագը մատուցել է Խրիմյան Հայրիկը: 2015թ. Հայրապետ Խաչատրյանի բրոնզաձույլ արձանը տեղադրվել է բարերարի կողմից կառուցված, ներկայիս «Արվեստի դպրոցի» տարածքում: Գավառի Սուրբ Կարապետ եկեղեցին կառուցվել է 1848թ. Բայազետից (Արևմտյան Հայաստան) ներգաղթած բնակիչների կողմից: Եկեղեցին բազիլիկ ոճի է, վերաբացվել է 2012թ.: Գավառ քաղաքի Հացառատ թաղամասի Սուրբ Աստվածածին եկեղեցու կառուցման ճշգրիտ ժամանակը հայտնի չէ: Արևմտյան ճակատի 1893թ. Արձանագրության մեջ հիշատակված է 898թ., եկեղեցին իր կառուցման տիպով բնորոշ է VII դարի ճարտարապետությանը: Արծվաքար թաղամասի սուրբ Աստվածածին Եկեղեցի,19-րդ դարի բազիլիկ ոճի կառույց է, քաղաքի տարածքներում կան մատուռներ՝ Սուրբ Հովհաննես, Թուխ Մանուկ: Քաղաքի Կենտրոնական Հրապարակում է գտնվում Հայրենական մեծ պատերազմի հուշարձանը: Զբոսաշրջիկների համար մեծ հետաքրքրություն կարող են առաջացնել ոչ միայն պատմամշակութային շինությունները, այլ նաև ավանդական բնամթերքները, ճաշատեսակները և թխվածքները, որոնք նաև լայն տարածում և ճանաչում են գտել ողջ հանրապետությունում:

Գավառի, ինչպես նաև Սևանի ողջ ավազանի, համար բնորոշ է արևափայլի մեծ տևողությունը՝ շուրջ 2500 ժամ/տարի: Հորիզոնական մակերևույթի գումարային

Ճառագայթահարումը ` 1595 կՎտժ/(մ2.տարի), ընդամենը 100 միավորով է զիջում հանրապետության միջին ցուցանիշին: Ֆոտոէլեկտրական մոդուլների կիրառումը այդ պայմաններում չափազանց գրավիչ է հատկապես տնտեսական առումով, հաշվի առնելով այդ տեխնոլոգիայի աննախադեպ էժանացումը վերջին մի քանի տարիներին:

#### 4. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳԻՐ

Արևային ֆոտովոլտային կայանի շինարարության փուլը կարող է ունենալ որոշակի բացասական ազդեցություններ շրջակա միջավայրի վրա, բայց այդ ազդեցությունները կարող են մեղմվել համապատասխան միջոցառումների կիրառմամբ:

Շինարարության ընթացքում հողային ռեսուրսների աղտոտումը կանխարգելելու համար նախատեսված միջոցառումները հետևյալն են.

- Արևային կայանի կառուցման ընթացքում հանվող հողը կկուտակվի տարածքում և կծածկվի անջրթափանց թաղանթով՝ որպեսզի կանխվի աղտոտումը:
- Հողային զանգվածի մի մասը կօգտագործվի անմիջապես տեղում՝ տարածքի բարեկարգման և հետլցման համար:
- Ճանապարհների ջրցանով և գրունտի խոնավեցմամբ կդիտարկվի, որպեսզի մակերևութային հոսքաջրեր չառաջանան:
- Շինարարության ընթացքում կօգտագործվեն արդեն գոյություն ունեցող գրունտային ճանապարհները:
- Տեխնիկական շինհրապարակից դուրս կգա միայն մաքուր վիճակում՝ շրջակա տարածքը չաղտոտելու համար:
- Շինարարական նյութերը կտեղադրվեն հատուկ տակդիրների վրա, իսկ տեխնիկական կայանվելու է հատուկ նշված վայրերում:

- Հատուկ տեխնիկական սպասարկման տարածքներում տեղադրվելու է մանրախիճ՝ տեղը մաքուր պահելու նպատակով:
- Եթե մեքենաներից կամ սարքավորումներից վառելիքի կամ քսայուղերի արտահոսք լինի, ապա փոխված մանրախիճը կհավաքվի և կհեռացվի՝ փոխարինվելով նորով:
- Շինարարական տեխնիկայի լիցքավորումը կամ վերանորոգումը կկատարվի միայն համապատասխան մասնագիտացված կետերում, որոնք գտնվում են գործունեության տարածքից դուրս:

Շահագործման փուլում նախատեսվում է տարածքների մաքրում և բարեկարգում՝ ապահովելով հողային ռեսուրսների պահպանությունը :

Շինարարության փուլ. Օդային ավազան արտանետումների հնարավոր ազդեցությունը կրճատելու և մեղմելու նպատակով.

- արևակայանի, շինարարական աշխատանքների և ճանապարհների շահագործման ընթացքում կատարվելու է գրունտի խոնավեցում, ճանապարհների ջրցան: Ջրցանը կատարվելու է ջրցան մեքենայով՝ չոր և շոգ եղանակներին:

- Գործունեության վայր շինանյութերի տեղափոխումը կկատարվի փակ ծածկ ունեցող մեքենաներով, իսկ նյութերը տեղափոխող մեքենաները կփակվեն անջրթափանց թաղանթով,

- տարածքում նյութերը կպահվեն ծածկված վիճակում՝ անջրթափանց թաղանթով կամ ժամանակավոր ծածկի տակ,

- շինարարական տեխնիկան և տրանսպորտային միջոցներն կօգտագործվեն միայն սարքին վիճակում, պարբերաբար կիրականացվեն ստուգումներ:

Շահագործման փուլում օդային ավազանի վրա հնարավոր ազդեցություն չի կանխատեսվում:

Շինարարության փուլ: Գործունեության իրականացման շինարարության փուլում ջրային ռեսուրսների վրա հնարավոր բացասական ազդեցությունները մեղմելու կամ կանխարգելու, նպատակով նախատեսվում է.

- գործունեության իրականացման ընթացքում աշխատողների համար խմելու որակի ջուր կմատակարարվի շէրով,
- շինհրապարակում կտեղադրվի պլաստմասե տարա՝ հոսքաջրերի, անձրևաջրերի հեռացման և հավաքման նպատակով,
- պարզարանում առաջացած նստվածքը կտեղափոխվի աղբավայր՝ պայմանագրային հիմունքներով,
- ճանապարհների ջրցանն իրականացվելու է տարվա չոր եղանակներին՝ ըստ անհրաժեշտության,
- ջրցանի և փոշենստեցման, մեքենաների անիվների լվացման համար կօգտագործվի տեխնիկական որակի ջուր, որը բերվելու է ավտոցիստեռնով՝ պայմանագրային հիմունքներով,
- շինարարական տրանսպորտային միջոցների և սարքավորումների սպասարկումը կատարել համայնքում գործող մասնագիտացված կետերում,
- շինարարության համար անհրաժեշտ բետոնախառնուրդը բերվելու է պատրաստի վիճակում մասնագիտացված կազմակերպությունների բետոնախատնիչ մեքենաներով՝ ըստ պահանջի,

Շահագործման փուլում. Ջրային ռեսուրսների պահպանման համար նախատեսվում է.

- աշխատողների համար խմելու ջուրը բերվելու է պատրաստի վիճակում՝ շէրով,
- աշխատողների կենցաղային և սանիտարական կարիքները կհոգան սանիտարական հանգույցից (բիոզուգարան),
- բիոզուգարանի մաքրումը կատարել մասնագիտացված կազմակերպությունների կողմից՝ պայմանագրային հիմունքներով:

## Աղմուկ և թրթռում

Արևային կայանի տեղադրման ընթացքում աղմուկի և թրթռումների մակարդակը կապված է լինելու շինարարական տեխնիկայի, սարքավորումների և տրանսպորտային միջոցների աշխատանքի հետ: ՀՀ-ում աղմուկի մակարդակը կանոնակարգվում է համաձայն՝ ՀՀ Առողջապահության նախարարի 2002թ. մարտի 6-ի՝ «ԱՂՄՈՒԿՆ ԱՇԽԱՏԱՏԵՂԵՐՈՒՄ, ԲՆԱԿԵԼԻ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՇԵՆՔԵՐՈՒՄ ԵՎ ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՏԱՐԱԾՔՆԵՐՈՒՄ» N2-III-11.3 ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՆՈՐՄԵՐ N2-III-11.3 ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ N 138 հրամանի և ՀՀ Քաղաքաշինության նախարարի 2014թ. մարտի 17-ի՝ ՀՀՇՆ 22- 04-2014 «ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՂՄՈՒԿԻՅ» ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՆՈՐՄԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ 2001 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-Ի N 82 ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ N79-Ն հրամանի պահանջներին համապատասխան: Ավտոմեքենաների և սարքավորումների աշխատատեղերում աղմուկի մակարդակը 80 դԲ (A) գերազանցելու դեպքում աշխատողները պետք է օգտագործեն անհատական պաշտպանական միջոցներ (գլխարկներ, ականջակալներ և այլն): Բնակավայրերի համար աղմուկի սահմանված թույլատրելի մակարդակը ցերեկային ժամերի համար կազմում է 55 դԲ (A), կամ ֆոնային մակարդակի ոչ ավել քան 3 դԲ (A) ավելացում: Հաշվի առնելով շինարարական աշխատանքների կարճաժամկետ բնույթը, աշխատակիցների վրա աղմուկի ազդեցությունը կրելու է կարճատև և ժամանակավոր բնույթ: Աղմուկի մակարդակը նվազեցնելու նպատակով հաշվետվությունում նախատեսվում են համապատասխան բնապահպանական միջոցառումներ, որոնց կիրառման դեպքում շինարարական աղմուկի և թրթռումների մակարդակը շինհրապարակին հարակից տարածքում չի գերազանցի ՀՀ օրենսդրությամբ սահմանված նորմերը:

Ելակետային տվյալներ

- Էքսկավատորի ձայնային հզորություն (Lw1)՝ 99 դԲ
- Հեռավորություն (r)՝ 50 մետր Հաշվարկի համար անհրաժեշտ գործակիցներ

- $\chi = 1$  (մոտ դաշտի ազդեցության գործակից)
- $\Phi = 1$  (աղմուկի ուղղվածության գործոն՝ համաչափ ճառագայթման համար)
- $\Omega = 2\pi$  (կիսագունդային ճառագայթման տարածությունը բացօթյա տարածքի համար)
- $k = 1$  (ձայնային դաշտի հավասարաչափ բաշխման խախտման գործակից)
- $B = 200$  (ձայնագիտական հաստատունը՝ մ<sup>2</sup>)

Յուրաքանչյուր սարքավորման աղմուկի մակարդակը հետևյալն է՝

$$\bullet \text{ Էքսկավատորի աղմուկի մակարդակ՝ } L_{w1} = 99 + 10 \cdot \log_{10} ((1 \cdot 1 / (2 \cdot \pi \cdot 502)) + 4 / 1 \cdot 200) \\ = 99 + 10 \cdot (-16.98) = 82.02 \text{ դԲ}$$

Հաշվի առնելով, որ նախատեսվող գործունեության հեռավորությունը բնակելի գոտուց մի քանի հարյուր մետր է, ապա ազդեցությունը բնակչության վրա բացառվում է:

## 6. ԹԱՓՈՆՆԵՐԻ ԱՌԱՋԱՅՈՒՄ

Արևային կայանի կառուցման և շահագործման ընթացքում թափոնների առաջացումը կանոնակարգվում է՝ Համաձայն ՀՀ բնապահպանության նախարարի 2006թ.-ի դեկտեմբերի 25-ի՝ «Ըստ վտանգավորության դասակարգված թափոնների ցանկի» N430-Ն և 2006թ. հոկտեմբերի 26-ի «Հայաստանի Հանրապետության տարածքում գոյացող արտադրության /այդ թվում՝ ընդերքօգտագործման/ և սպառման թափոնների ցանկը հաստատելու մասին» N 342-Ն հրամանների, ըստ որի հնարավոր առաջացող թափոններն են.

- Յուղոտված լաթեր (4-րդ 58200600 01 01 4)՝ 0,5մ<sup>3</sup> քանակով:
- Ասֆալտ-բետոնե խառնուրդի մնացորդներ (4-րդ դաս՝ 31401200 01 00 4)՝ 15մ<sup>3</sup> քանակով:
- Յուղերով աղտոտված ավազ (յուղի պարունակությունը 15%-ից ավել (3-րդ դաս՝ 31402303 04 03 3)-12մ<sup>3</sup>:

• Քիչ քանակությամբ մալուխների, հաղորդալարերի մնացորդների թափոններ՝ (ծածկագիր՝ 35131100 01 00 4)՝ 10կգ:

.Կենցաղային աղբ (ծածկագիր՝ 91100100 01 004)՝ օրական մոտ 60 կգ, կհեռացվի ամենօրյա ռեժիմով՝ Գավառի համայնքապետարանի կողմից նախանշված վայր, պայմանագրային հիմունքներով՝ խուսափելու համար աղբի կուտակումից:

.Շինարարական աղբ (ծածկագիր՝ 91200600 01 000) 2500 խմ:

.Քանի որ հողային գրունտն ամբողջությամբ անմիջապես կիրառվելու է տոփանման եղանակով հետլիցքի համար, չի նախատեսվում դրա տեղափոխում կամ կուտակում և այն չի դիտարկվում որպես թափոն:

Վնասված և շահագործումից դուրս եկած արևային վահանակների պահեստավորումը նախատեսվում է շինհրապարակի հատակագծով նախանշված նյութերի պահեստարանում:

Իսկ բոլոր այն թափոնատեսակները որոնք ենթակա կլինեն վերամշակման, թափոնների արդյունավետ կառավարման նպատակով կտրամադրվեն վերամշակող ընկերություններին:

Շինարարության փուլում թափոնների հնարավոր ազդեցությունները շրջակա միջավայրի վրա մեղմելու նպատակով նախատեսվում է.

- խուսափել տարածքում վտանգավոր նյութերի և մետաղական թափոնների կուտակումից,  
- նյութերի մնացորդները (մետաղական մասեր, մետաղալարեր և այլն) Կապալառու կազմակերպության կողմից հավաքվելու են հատուկ տարողությունների մեջ և տեղափոխել,

- մետաղական մասերի և նյութերի մնացորդները հանձնվելու են համապատասխան լիցենզավորված կազմակերպություններին, դրանց հետագա վերամշակման և օգտագործման համար,

- շինարարական թափոնները՝ շինաղբ, բետոնի մնացորդներ, եռակցման խարամը կհավաքվեն պարկերի մեջ և կտեղափոխվեն համայնքի կողմից հատկացված վայր, քանի

որ տարածաշրջանում չկան կազմակերպված սանիտարական աղբավայրեր, անհրաժեշտ քանակի դեպքում կհանձնվեն շինարարական ընկերություններին,

-ավելցուկային հողային գրունտը տեղափոխվելու է համայնքի կողմից հատկացված վայր,

- շինհրապարակում կենցաղային աղբը հավաքել համապատասխան աղբարկղերում և տեղափոխել աղբավայր՝ համայնքապետարանի համաձայնությամբ,

-շինարարության ժամանակ առաջացած աղտոտված լաթերը, պարկերը հանձնվելու են թափոնների ջերմային վնասագերծում կատարող կազմակերպություններին կամ խառնվելու են կենցաղային աղբի հետ 1/10 հարաբերակցությամբ և տեղափոխվելու են աղբավայր:

## 7. ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄՈՆԻԹՈՐԻՆԳ

Այս մոնիթորինգի ծրագրի նպատակն է ապահովել Արևային ֆոտովոլտային կայանի շինարարության և շահագործման ընթացքում շրջակա միջավայրի վրա ազդեցության նվազեցումը՝ կիրառելով բոլոր անհրաժեշտ միջոցառումները և վերահսկելով դրանց արդյունավետությունը: Մոնիթորինգը իրականացվելու է յուրաքանչյուր փուլում՝ համապատասխան գործողությունների ճիշտ կազմակերպման և բնապահպանական անվտանգության ապահովման համար:

|                                             |                                                                                                        |                                              |
|---------------------------------------------|--------------------------------------------------------------------------------------------------------|----------------------------------------------|
| 1. Շրջակա միջավայրի բաղադրիչների մոնիթորինգ | Նպատակ՝ ստուգել մթնոլորտային օդի, և հողային ռեսուրսների վրա գործողությունների բացասական ազդեցությունը: | • Տարեկան մեկ անգամ                          |
| 2. Շինարարական և անձնական                   | Նպատակ՝ հաստատել աշխատանքային անվտանգության նորմերի                                                    | Ամենօրյա ռեժիմով<br>Շինարարական աշխատանքների |

|                                                                                                                                    |                                                                                                                                                                                                                          |                                                                                                                                                                                                                                                                                             |
|------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|--------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|---------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|
| պաշտպանության<br>միջոցների մոնիթորինգ                                                                                              | և աշխատողների<br>պաշտպանության<br>երաշխիքները:                                                                                                                                                                           | ընթացքում պարբերաբար<br>ստուգայցեր՝<br>շինարարական<br>տեխնիկայի, նյութերի,<br>ինչպես նաև<br>աշխատողների<br>պաշտպանիչ միջոցների<br>ճիշտ օգտագործման<br>համար:                                                                                                                                |
| 3.Շինարարական<br>տարածքի մոնիթորինգ՝<br>ՀՀ Կարմիր գրքում<br>գրանցված<br>բուսատեսակների<br>հայտնաբերման և<br>պահպանման<br>նպատակով: | Նպատակ՝ ՀՀ<br>կառավարության<br>31.07.2014թ. «Բուսական<br>աշխարհի օբյեկտների<br>պահպանության» կարգի<br>պահանջների կատարում:<br>Բուսական ու կենդանական<br>աշխարհի վրա շրջակա<br>միջավայրի ազդեցության<br>վերահսկողություն: | Միջոցառումներ:<br>• Համապատասխան<br>մասնագետի միջոցով<br>ակնադիտական<br>գնումներ:<br>Կարմիրգրքյան<br>տեսակների<br>հայտաբերման դեպքում<br>դիմել լիազոր մարմնին,<br>իսկ կենդանիների<br>բնադրավայրերի<br>հայտնաբերման դեպքում<br>դրանց պահպանություն<br>և տեղափոխում<br>բարենպաստ<br>միջավայր: |
| 4.Տրանսպորտային<br>միջոցների                                                                                                       | Նպատակ՝ պահպանել<br>երթնեկության կանոնները                                                                                                                                                                               | Ամենօրյա ռեժիմով                                                                                                                                                                                                                                                                            |

| երթնեկության<br>վերահսկում                                           | և կանխարգելել շրջակա<br>տարածքների աղտոտումը:                                          |                                                                                                                                                                                                                   |
|----------------------------------------------------------------------|----------------------------------------------------------------------------------------|-------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|
| 5.Շինարարական<br>տեխնիկայի և<br>մեքենաների<br>ստուգումներ            | Նպատակ՝ խուսափել<br>տեխնիկայի<br>բացթողումներից և<br>հնարավոր<br>աղտոտումներից:        | Շինարարական<br>մեքենաների<br>օգտագործումը միայն<br>տեխնիկական վիճակի<br>համապատասխանում՝<br>արտահոսքերի և<br>անսարքությունների<br>կանխարգելման համար                                                              |
| 6.Շինարարության<br>իրականացման<br>Ժամանակացույցի<br>վերահսկողություն | Նպատակ՝ պահպանել<br>նախագծի կատարողական<br>Ժամանակացույցը և<br>խուսափել ուշացումներից: | <ul style="list-style-type: none"> <li>Միջոցառումներ:</li> </ul> Շինարարության<br>կատարումը և<br>բովանդակությունը<br>համաձայն<br>Ժամանակացույցի՝<br>ամենօրյա խնամքով<br>վերահսկվող<br>Ժամանակային<br>սահմաններով: |

Այս մոնիթորինգի ծրագրի իրականացման արդյունքում, մեր նպատակն է նվազագույնի հասցնել շրջակա միջավայրի վրա շինարարության բացասական ազդեցությունը և ապահովել կայուն և պատասխանատու էներգետիկ նախագծի հաջողություն:

## 7. ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԼԱՆ

Բնապահպանական կառավարման պլանը (ԲԿՊ) փաստաթուղթ է, որը նախատեսում է միջոցառումների շարք՝ ուղղված գործունեության ազդեցության գնահատման և վերահսկման համար: Այն ներկայացնում է ռազմավարական մոտեցում, որով կազմակերպությունները կամ գործարարները կարող են նվազեցնել իրենց գործունեության բացասական ազդեցությունը շրջակա միջավայրի վրա:

| № | Արտադրական գործընթացում ազդեցության ենթակա շրջակա միջավայրի բաղադրիչները և ազդող գործոնները | Մեղմող միջոցառման անվանումը                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                | Միջոցառման իրականացման պատասխանատու |
|---|---------------------------------------------------------------------------------------------|------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|-------------------------------------|
|   | Շինարարության փուլ<br>Օդային ավազան                                                         | Օդային ավազան արտանետումները մեղմելու նպատակով նախատեսվում է.<br>-շինարարական աշխատանքների և ճանապարհների շահագործման ընթացքում կատարվելու է գրունտի խոնավեցում, ճանապարհների ջրցան՝ ըստ անհրաժեշտության: Ջրցանը կատարվելու է ջրցան մեքենայով՝ չոր և շոգ եղանակներին,<br>- գործունեության վայր շինանյութերի տեղափոխումը կատարվելու է փակ ծածկ ունեցող մեքենաներով, կամ նյութերը տեղափոխող մեքենաները փակվելու են անջրթափանց թաղանթով,<br>-տարածքում նյութերը պահվելու են ծածկված վիճակում՝ անջրթափանց թաղանթով կամ ժամանակավոր ծածկի տակ,<br>-շինարարական տեխնիկան և տրանսպորտային միջոցներն օգտագործվելու | Կապալառու                           |

են միայն սարքին վիճակում, իրականացվելու են պարբերաբար ստուգումներ:

|                    |                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                           |           |
|--------------------|---------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|-----------|
| Շահագործման փուլ   | Շահագործման փուլում օդային ավազանի վրա ազդեցություններ չեն նախատեսվում:                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                   |           |
| Հողային ռեսուրսներ | Շինարարական աշխատանքների կատարման տարածքում հողաբուսաշերտի հզորությունը կազմում է միջինը 0-0,4մ: Որոնք խախտվելու են միայն արևային վահանակների հենասյուների տեղադրման ընթացքում, սակայն անմիջապես աշխատանքների ավարտից հետո հետլիցք է իրականացվելու:<br>Ճանապարհի ջրցանը և գրունտի խոնավեցումը կատարվելու է այնպես, որպեսզի չառաջանան մակերևութային հոսքաջրեր,<br>-շինարարական նյութերը տեղադրվելու են հատուկ տակդիրների վրա, հողային ռեսուրսները չադտոտելու նպատակով,<br>-շինարարական տեխնիկայի և սարքավորումների լիցքավորումը, վերանորոգումը կատարվելու են գործունեության տարածքից դուրս՝ հատուկ մասնագիտացված կետերում: | Կապալառու |
| Շահագործման փուլ   | Ազդեցությունները բացառվում են:                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                            |           |
| Ջրային ռեսուրսներ  | Շինարարության ընթացքում տեխնիկական ջրի/ջրցան/ պահանջը կբավարարվի ջրցան մեքենաների միջոցով, իսկ խմելու ջուրը կմատակարարվի տարրաներով՝ շէրով,                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                               |           |

- ճանապարհների ջրցանն իրականացվելու է տարվա չոր եղանակներին՝ ըստ պահանջի,
- շինարարության համար անհրաժեշտ բետոնախառնուրդը բերվելու է պատրաստի՝ պայմանագրային հիմունքներով:

|                      |                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                         |
|----------------------|-----------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|
| Շահագործման փուլ     | Ազդեցությունները բացառվում են:                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                          |
| Կենսաբազմազանություն | <p>Տարածում կենսաբազմազանության հայտնաբերման և դրանց պահպանման անհրաժեշտությունից ելնելով նախատեսվում է.</p> <ul style="list-style-type: none"> <li>- մշակվել գործողությունների պլան, առաջնորդվելով ՀՀ կառավարության 31.07.2014թ. «ՀՀ բուսական աշխարհի օբյեկտների պահպանության եվ բնական պայմաններում վերարտադրության նպատակով դրանց օգտագործման կարգը սահմանելու մասին» N781-Ն որոշման պահանջներից,</li> <li>- ՀՀ Կարմիր գրքում գրանցված բուսատեսակների և կենդանատեսակների հայտնաբերման դեպքում՝ տեղեկացնել լիազոր մարմնին:</li> </ul> |
| Աղմուկ և թրթռում     | <p>Շինարարության փուլում աղմուկի և թրթռումների մակարդակը նվազեցնելու նպատակով նախատեսվում է.</p> <ul style="list-style-type: none"> <li>- շինարարական աշխատանքները և տրանսպորտի տեղաշարժը կազմակերպել ցերեկային ժամերին,</li> <li>- տրանսպորտային միջոցները և շինարարական տեխնիկան օգտագործել միայն սարքին վիճակում,</li> <li>- պարբերաբար ստուգել և կարգաբերել տեխնիկական միջոցները, տրանսպորտային միջոցների շարժիչները:</li> </ul>                                                                                                    |

- ՕԳ-ի և դրանց տարրերի անցկացման ժամանակ հաշվի առնել տարածքի կլիմայական պայմանները՝ քամու ճնշումը, սառցակեղևի շերտի հաստությունը, օդի ջերմաստիճանը, հաղորդալարերի և մետաղաձուլանների պարը, թրթռումը,
- Արևակայանի տարածքը գտնվում է

բնակավայրերից հեռու և աղմուկի մակարդակը չի կարող ազդեցություն ունենալ բնակավայրերի վրա:

Պատմամշակութային հուշարձաններ

Շինարարական աշխատանքների ընթացքում որևէ հնագիտական շերտի հայտնաբերման դեպքում շինարարական աշխատանքներն անմիջապես դադարեցնել և տեղեկացնել համապատասխան պետական մարմին (Պատմական և մշակութային հուշարձանների պահպանության վարչությանը)՝ համաձայն ՀՀ գործող օրենսդրության հետագա գործողությունները կազմակերպելու համար: Շինարարական աշխատանքները հնարավոր կլինի շարունակել միայն համապատասխան թույլտվության տրամադրման դեպքում:

Մարդու առողջության վրա ազդեցությունների կառավարում

Գործունեության իրականացման շինարարության ընթացքում հնարավոր են աշխատողների հետ կապված վնասվածքներ, որի համար նախատեսվում է.

- պահպանել ՀՀ օրենսդրությամբ պահանջվող աշխատանքային անվտանգության նորմերը, ՀՀ Առողջապահության նախարարության 2012թ. սեպտեմբերի 19-ի

«Կազմակերպություններում աշխատողների սանիտարական կենցաղային սենքերի» N 2.2..8- 003-12 սանտարական կանոնները և նորմերը հաստատելու մասին թիվ 15-Ն հրամանի պահանջները,  
-արտադրական հրապարակն ապահովվել 1-ին բուժօգնության համար անհրաժեշտ դեղարկղիկով,

- աշխատողների համար հատկացնել ընդհանուր ծառայությունների տարածք՝ հանգստի և անձնական հիգիենայի կարիքները հոգալու համար(տնակ),

- շինհրապարակում և հարակից տարածքում տեղադրել հնարավոր վտանգների մասին նախազգուշացնող նշաններ,

-մալուխային գծերի տեղադրումը կատարել բացառելով մալուխային գծերի հավաքակցման և շահագործման գործընթացում վտանգավոր մեխանիկական լարումների և վնասվածքների առաջացումը,

- շինհրապարակն ապահովել հակահրդեհային միջոցներով, լուսավորության արքերով՝ գիշերային տեսանելիության հնարավորությամբ,

-հեղուկ նյութերը տեղափոխել շինարարական հարթակ օգտագործումից առաջ և պահել հատուկ տակդիրների վրա՝ հնարավոր արտահոսքերը բացառելու համար,

- ապահովել շինարարական նյութերի, վառելիքի, նավթամթերքի պահեստավորման և բեռնաթափման կանոնների համապատասխանությունը գործող օրենսդրության պահանջներին,

վերահսկել աշխատող սարքավորումների պիտանելիությունը, մեքենաների երթերը, հաջորդականությունը, բացառվելու են մեքենաների կուտակումները,

- նվազագույնի հասցնել ճանապարհների խցանումներ առաջացնող գործողություններն՝ ընդհանուր երթևեկության խոչընդոտումը և հասարակական անվտանգությունն ապահովելու նպատակով,

- աշխատողներին ապահովել համապատասխան բանվորական հագուստ, շինհրապարակի որակի, անվտանգության կանոնների պահպանումն իրականացվելու են  
ՀՀ

առաջացումը,

- շինհրապարակն ապահովել  
հակահրդեհային միջոցներով,  
լուսավորության արքերով՝ գիշերային  
տեսանելիության հնարավորությամբ,

- հեղուկ նյութերը տեղափոխել շինարարական  
հարթակ օգտագործումից առաջ և պահել  
հատուկ տակդիրների վրա՝ հնարավոր  
արտահոսքերը բացառելու համար,

- ապահովել շինարարական նյութերի,  
վառելիքի, նավթամթերքի պահեստավորման և  
բեռնաթափման կանոնների  
համապատասխանությունը գործող  
օրենսդրության պահանջներին,

վերահսկել աշխատող սարքավորումների  
պիտանելիությունը, մեքենաների երթերը,  
հաջորդականությունը, բացառվելու են  
մեքենաների կուտակումները,

- նվազագույնի հասցնել ճանապարհների  
խցանումներ առաջացնող գործողություններն՝  
ընդհանուր երթևեկության խոչընդոտումը և  
հասարակական անվտանգությունն  
ապահովելու նպատակով,

- աշխատողներին ապահովել  
համապատասխան բանվորական հագուստ,  
շինհրապարակի որակի, անվտանգության  
կանոնների պահպանումն իրականացվելու են  
ՀՀ օրենսդրության պահանջներին  
համապատասխան:

## 8. ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐ

Շինարարության փուլ: Շինարարական աշխատանքների կատարման ընթացքում արտակարգ իրավիճակների հնարավոր ազդեցությունները մեղմելու և դրանց առաջացումը կանխարգելելու նպատակով նախատեսվում է.

- պահպանել հրդեհանվտանգության նորմերը, նախատեսվող գործունեության վայրն ապահովվել հրդեհաշիջման վահանակով՝ 2 հատ, հակահրդեհային կրակմարիչներով, տեղադրվելու է ջրի բաք,
- աշխատակիցներին նախապատրաստել արտակարգ իրավիճակներում գործելու պայմաններին, տարածքն ապահովել առաջին օգնության ծառայությունների հետ հուսալի կապով,
- հեղուկ նյութերը տեղափոխել շինարարական հարթակ օգտագործումից առաջ և պահել հատուկ տակդիրների վրա՝ հնարավոր արտահոսքերը բացառելու համար,
- մթնոլորտային տեղումների, քամու ուժեղացման և այլ վտանգավոր երևույթների ժամանակ շինարարական աշխատանքները դադարեցնել:

***Մարդու առողջություն, աշխատանքի կազմակերպում և անվտանգություն.***

Շինարարության փուլում աշխատողների առողջությունը, աշխատանքի ճիշտ կազմակերպումը և անվտանգությունն ապահովվելու համար նախատեսվում է.

- պահպանել ՀՀ օրենսդրությամբ պահանջվող աշխատանքային անվտանգության նորմերը, ՀՀ Առողջապահության նախարարության 2012թ. սեպտեմբերի 19-ի «Կազմակերպություններում աշխատողների սանիտարական կենցաղային սենքերի» N 2.2..8-003-12 սանտարական կանոնները և նորմերը հաստատելու մասին թիվ 15-Ն հրամանի պահանջները,
- շին.հրապարակն ապահովվել 1-ին բուժօգնության համար անհրաժեշտ դեղարկղիկով,
- աշխատողների համար հատկացնել ընդհանուր ծառայությունների տարածք՝ հանգստի և անձնական հիգիենայի կարիքները հոգալու համար(տնակ),

-աշխատողներին ապահովել էլեկտրապաշտպանության միջոցներով, ձեռնարկել անհրաժեշտ միջոցառումներ հնարավոր ռիսկերի ազդեցությունը կանխարգելելու համար, իսկ դրա անհնարինության դեպքում՝ դադարեցնել աշխատանքը,

- շինհրապարակում և հարակից տարածքում տեղադրել հնարավոր վտանգների մասին նախազգուշացնող նշաններ, տեղեկատվական, ինչպես նաև կողմնակի մարդկանց մուտքն արգելող նշաններ,

- շինհրապարակն ապահովել հակահրդեհային միջոցներով, լուսավորության արքերով՝ գիշերային տեսանելիության հնարավորությամբ,

-վերահսկել աշխատող սարքավորումների պիտանելիությունը, բացառել գործնելության վայրում խոտանված սարքերի կուտակումները,

-վերահսկել մեքենաների երթերը, հաջորդականությունը, բացառել մեքենաների կուտակումները, մի քանի շինարարական տեխնիկական միջոցների աշխատանքը մեկ տեղամասում,

- նվազագույնի հասցնել ճանապարհների խցանումներ առաջացնող գործողություններն՝ ընդհանուր երթևեկության խոչընդոտումը և հասարակական անվտանգությունն ապահովելու նպատակով,

- մալուխային գծերի տեղադրումը կատարել բացառելով մալուխային գծերի հավաքակցման և շահագործման գործընթացում վտանգավոր մեխանիկական լարումների և վնասվածքների առաջացումը,

- մթնոլորտային տեղումների, քամու ուժեղացման և այլ վտանգավոր երևույթների ժամանակ շինարարական աշխատանքները դադարեցնել:

Շինաշխատանքները կկատարվեն պահպանելով շինարարության ժամանակացույցը և աշխատանքի անվտանգության կանոնները:

***Շահագործման փուլում Մարդու առողջության պահպանման նպատակով նախատեսվում է.***

-ապահովել առաջին բուժօգնության անհրաժեշտության դեղարկղիկով,

- կիրառվող հաղորդալարերի և մալուխների թաղանթները և մեկուսացումը պետք է համապատասխանի անցկացման եղանակին և շրջապատող միջավայրի պայմաններին,
- Էլեկտրամատակարար կազմակերպությունը պետք է ապահովի իր սեփականությունը հանդիսացող էլեկտրական ցանցերին անմիջականորեն միացված՝ սպառողի սեփականությունը հանդիսացող էլեկտրական գծերի պաշտպանությունն էլեկտրական վնասվածքներից՝ համաձայն միացման պայմանագրի,
- Արևակայանի կառուցման և շահագործման աշխատանքները պետք է կատարել ՀՀ կառավարության 21 ապրիլի 2023 թվականի «Էլեկտրակայանքների շահագործման անվտանգության կանոնները հաստատելու մասին» N 583-Ն որոշման պահանջներին համապատասխան:

## Գրականություն

1. ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2020 թվականի դեկտեմբերի 28-ի «Երկրաշարժադիմացկուն շինարարություն. նախագծման նորմեր» N102-Ն հրաման
2. Շինարարական կլիմայաբանություն, ՀՀՇՆ II-7.01-2011
3. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի 2017-2025 թվականների զարգացման ռազմավարություն:
4. Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության հրապարակումներ
5. Հայաստանի ազգային ատլաս: Հատոր Ա
6. Почвы Армянской ССР. Ред./ Р.А. Эдилян, Г.П. Петросян, Н.Н. Розов. Ереван: “Айастан”, 1976 г.
7. Հայաստանի բույսերի Կարմիր Գիրք.– 2010թ.
8. Հայաստանի կենդանիների Կարմիր Գիրք.– 2010թ.
9. Флора Армении / под ред. А.Л.Тахтаджяна. – Ереван: изд-во АН Арм ССР
10. “Растительность Армянской ССР”. Магакьян А.К.
11. “Флора, растительность и растительные ресурсы Армении”, Институт ботаники НАН РА Армянское ботаническое общество. Ереван
12. “Дикорастущие съедобные растения Армении”. А.П. Тер-Восканян, Ученые записки Ереванского государственного института.
13. “Цветущие уголки биоразнообразия”, FAO,  
<http://www.fao.org/3/i1687r/i1687r08.pdf>
14. “Деревья и кустарники Армении в природе и культуре”. Ж.А. Варданян, 1952
15. Животный мир Армянской ССР. Даль С.К, 1954
16. ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի պաշտոնական կայք

17. ՀՀ կառավարության 2010 թվականի հունվարի 29-ի N 71-Ն որոշում: ՀՀ կենդանիների Կարմիր գիրք
18. ՀՀ կառավարության 2010 թվականի հունվարի 29-ի N 72-Ն որոշում: ՀՀ բույսերի Կարմիր գիրք
19. Հայաստանի Հանրապետության Կառավարության 2022 թվականի դեկտեմբերի 8-ի N 1912-Ն որոշում Սևանի ջրավազանային կառավարման տարածքի 2022-2027 թվականների կառավարման պլանը հաստատելու մասին
20. <http://agroecoarm.com/wp-content/uploads/2016/07/%D4%B3%D4%B5%D5%82%D4%B1%D5%90%D5%94%D5%88%D6%82%D5%86%D4%BB%D5%94%D4%BB-%D5%84%D4%B1%D5%90%D4%B6-Gegharkhunik-Region.pdf>
21. Ակսել Պոտոյան, Հայաստանի Հանրապետության Տնտեսական Եվ Սոցիալական Աշխարհագրություն: Երևան 2022
22. Հայաստանի Հանրապետության Կառավարություն Որոշում 9 Հունվարի 2003 թվականի N 80-Ն Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի Մարզի Պատմության Եվ Մշակույթի Անշարժ Հուշարձանների Պետական Ցուցակը Հաստատելու Մասին <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=37837>